ՊԱՐՈՒՅՐ
ՍԵՎԱԿ
ԵՎ ԱՅՐՄԻ
ՄՈՂՏԱՅՈՅ
ԱՂԱՐԿ

Եվ այդ մի Մեծագույն Մաքառում, պատմության դժբախտ մի պահի իր հայրական աչքով ճնշը մեր նոցոց ու սլանձիի ազատելու, որ իրատեսի կրչիրով է Մեսրոպան Իր ծորդերի զանգանը՝ նա դարեր շարունակ ճաշտությունն սարեց, մինչև որ նոցոց ու սլանձիի աչ օրեր եկան, երբ ծորդիրյուն է ճաշտությունն սանում իր մեծագույն զանգանին հրանաշխատությանի ու հզաշտության։

ՎԼԻՐՈՒՇՐ ՍԵՎԱԿ
27 մայիսի, 1962 թ.

(Գրական գրաչի մասնաբաժնի Մեսրոպ Մեսրոպյանի ճեմարանի կարապետների մանկագրության անհատը)

Սրանանում ապրելը, մեր Աստծին ուսուցչի անունը կրող դպրոցում սովորելը մեծ պատիվ է և մոլեգան մեծ էլ պարտականություն։

Ձանձրանք երբեմն դատում ենք մեր պատվին և ձգտելիք ճնշողներին չտեր հասարակ ապ մեր պարտականությունը։

Մեսրոպ Մաշտոցի ճնշառ պահպանող՝

ՎԼԻՐՈՒՇՐ ՍԵՎԱԿ
25 սեպտեմբերի, 1964 թ.

ՄԵՐԻՆԻՆԻՆԵՐԻ ՀԵՐՈՒԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ես՝ դ՝ դ՝

Ինձնից հեռուն,
Նախ և առաջ մտածում է լռության մեջ,
Իսկ նոր խոսել է սկսում՝
Բարկացնում է ավագներին
Եվ բարկացնում անկեղծորեն ճ,
Որովհետև . կրտսերը՝ մի՞շտ անհասկացող,
Իսկ ավագը .. հասկացող է

Այնա՞զ ատտվան,
Մի՞թե իրոք հատանիշ են ու համազոր
Հասկացողն ու կասկածողը .

Ամեն սերունդ
Նախ և առաջ մահանում է կասկածելով·

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

ՊԱՐՈՒՅՐ
ՍԵՎԱԿ

ԵՎ ԱՅՐ ՄԻ՝ ՄԱՆՑՏՈՑ ԱՂՈՒԿ

ԵՐԵՎԱՆ «ԼՈՒՅՍ» 1991

Կազմեց ՀԱՍԼՈՏ ԳԱՐՃԻԿՅԱՆ

Պարույր Սևակ

Եվ Այր մի՝ Մաշտոց անուն... /կազմող՝ Հ. Կարճիկյան/. — Եր.։ Լույս, 1991.— 79 էջ։

Պարույր Սևակի (1924—1971) «Խոսք Հավատիքին», «Մայրենի լեզուս, «Հայոց լեզու» բանաստեղծությունները, «Եվ Այր մի՝ Մաշտոց անուն...» անգուգական պոեմը և «Թռչի գիա՞ գրիչս հոգվածը նվիրված են հայ գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցին, նրա գործի սրբությունը ժամն ու պատմական նշանակությանը, հայոց լեզվի զորեղությանը։

Անցյալի ու ներկայի զուգահեռներով բանաստեղծը նոր սերնդին է փոխանցում հայ ժողովրդի հավերժության գաղտնիքը՝ սոցիալ-քաղաքական իրադարձությունների հենքի վրա։

Գիրքը հրատարակվում է Մեծ բանաստեղծի մահվան 20-ամյակի առթիվ։

Ս 4708080102 (80) / 702 (01) 1991 — արտապլանային. 1991

ПАРУЙР СЕВАК

...И муж по имену Маштоц

(на армянском языке)

Ереван «Луйс» 1991

© Կազմող՝ Հ. Թ. Կարճիկյան, *1991*

ISBN 5-545-00852-7

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Սիրելի դպրոցականներ և ուսանողներ.

Չեպանից շատերը ծնվել են Պարույր Սևակի մահից հետո: Անշուշտ շատ եք լսել նրա մասին, կարդացել նրա ստեղծագործությունները, բայց հավանաբար քիչ բան գիտեք նրա մարդկային կերպարի մասին:

Նա շատ էր սիրում երեխաներին. «Ամենից առաջ ես հայր եմ՝ կասեմ» իր բանաստեղծություններից մեկում շեշտում էր նա: Միշտ մտահոգված էր նոր սերնդի ապագայով և իր մտավոր ու հոգևոր բոլոր ուժերը կենտրոնացնում էր՝ սերունդներին փրկելու ուծացնող բռնակալության ճիրաններից, նրանց մեջ արթնացնելու ու պահպանելու ազգային-ը, արդարացին ու հերոսականը:

Հենց միայն այս փոքրիկ գրքույկը, ուր առաջին անգամ ի մի են բերվել Պարույր Սևակի Հայոց լեզվին ու Հայ գրերի ստեղծողին նվիրված ստեղծագործությունները, Չեկ շատ բան կասի նրա մասին, նրա ազգային կերպարի և ճշմարիտ հայրենասիրության մասին:

Մի անգամ ուսանողության հետ հանդիպման ժամանակ (պոլիտեխնիկական ինստիտուտում), նրանց տված հարցին, թե ինչ է հայրենասիրությունը, նա պատասխանեց. «Հայրենասիրությունը այն է, որ յուրաքանչյուր մարդ իր գործը կատարում է խղճի մտոք. աշակերտը լավ է սովորում

իր դասերը (և բոլոր առարկաները հավասարապես, որովհետև մեր Հայաստան երկրին իսկական՝ լիարժեք մասնագետներ են հարկավոր), ուսանողը չի ծուլանում կատարել իր պարտականությունները, քանվորը՝ իր, գյուղացին՝ իր, ուսուցիչն ու գիտնականը՝ իրենց...: Երբ ամեն մարդ, ամեն հայ նվիրումով կատարի իր պարտականությունները, իրեն վստահված գործը — դա էլ կլինի իսկական հայրենասիրությունը»:

Քսանմեկ-քսաներկու տարի է անցել նրա այս խոսքերից, բայց այսօր անկախության ուղին բռնած մեր Հանրապետության համար Սեակյան այս դասը ավելի է կենսական:

Քսան տարի առաջ՝ 1971 թ. հունիսի 17-ին ավտովթարից ողբերգաբար կոտրվեց Մեծ բանաստեղծը՝ կնոջ հետ: Երջանիկ պատահականությամբ փրկվեցին նրա Արմեն և Կորյուն զավակները:

Այս տարի՝ 1991 թ. լրանում է Պարույր Սեակի մահվան 20 ամյակը: Այս գրքույկը «Լույս» հրատարակչության կողմից ընծա է նրա չխամրող հիշատակին:

Ընծա է Ձեզ, սիրելի դպրոցականներ և ուսանողներ, որպեսզի (առաջին անգամ, թե՝ վերստին) ընթերցելով սեվակյան կրակվող տողերը, հաղորդակցվելով նրա «վառվող արյանը», նրա նորովի մատուցած Մեսրոպ Մաշտոցյան հրաշքին ու սխրագործությանը, հավատարիմ մնաք մեր ազգային ավանդներին: Դառնաք Հայաստանի Հանրապետության լիարժեք քաղաքացիները:

Բարին ընդ Ձեզ:

8-ը մայիսի, 1991 թ.

ԹՈՍՔ ՀԱՎԱՍՏԻՔԻ

Մ. Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առթիվ։

«Ոչ միայն որ գործենն պարտական եմ, այլև որ յանձն առնուն»։

Ա

Քեզ հետ այս պահին զրուցել էր պետք
Միայն նախդրիվ-ոսկեղեղիկով
Եվ պետք էր գրել այն երկաթագիր տառերով միայն,
Որոնց կերպը դու առել ես գուցե
Հին զորժիքներից մեր դարբիններին
Եվ այն կեռերից ամենատարբեր,
Որոնցից զեն ու զարդ էին կախում...

Բայց Գյուտարարիդ համեմատությամբ
Ես՝ Դանիելյան թերատ այրուբեն,
Զուրկ յոթնաղղանչ ձայնավորներից,
Չեմ կարող զնգալ
Ու չեմ էլ զնգում,
Այլ պիտի հիմա լոկ բա՜ ածայնեմ,
Թե պե՞տք է արդյոք, որ Քո անունով
Մտքի մի օջախ կամ մի մայրուղի կոչվի աշխարհում,

Եթե Քո անվամբ մի ամբո՞ղջ աղգ է կոչում ինքն իրեն,
Ա՛զգ,
Որ ապրելու մտադրությամբ մեռել է հաճախ,
Սակայն մեռնելու մտադրությամբ չի ապրել երբե՞ք՝
Թեկուզեւ մի օր...
Եվ պե՞տք է արդյոք,
Որ արձաններդդ հառնեն աստ ու անդ,
Եթե ինքդդ Քեզ — քանի՞ դար արդեն —
Քանդակում ես միշտ
Մեր մանկաշխարհի պարզ հոգիներին
Երեսունեվեց կերպերով անքանդ։

Պե՞տք է ուրեմն...
Ու պետք է եթե՝
Քե՛զ... պետք չէ բնա՞վ,
Պետք է... միայն մե՛զ։

Բ

Դո՛ւ, որ անվարան քնարարձեքիր կռապաշտներին,
Վերաքննությամբ պիտի մեզ ներես,
Եթե խոսում ենք քանդակ-արձանից,
Չի կան արձաններ, որ կուռք չեն դառնում,
Եվ միաստվածներ կան նոր ու նորեկ,
Որ չեն տարբերվում կռապաշտներից։
Եվ ա՛յն պատճառով պիտի մեզ ներես,
Որ հնուց անտի սովոր լինելով
Հարկի և տուրքի,
Բաժի և սակի

Ու վճարելով միշտ ճարահատյալ,
Մենք հոգով լոկ մե՛կ հարկ ենք ընդունել՝
Հարկը հոգեկա՜ն։
Եվ Դու՝ եզակի մի հարկահավաք,
Որ ընտրյրված է — ոչ նշանակված,
Ա՛ռ ու մթերի՛ր,
Ա՛ռ ու պաշարի՛ր
Տասնրվեցդարյա հարկը մեր հոգու,
Որպեսզի կրկին վերաբաժանես՝
Մեր նեղ օրերին,
Բայց... իրրև նպաստ
Եվ ոչ մուրացու ողորմաբաժին...

Գ

Աշխարհզբոսիդ համեմատությամբ
Ես մինչև անգամ Արաքս չտեսած տնաքնակրս,
Ի լրո՛ գիտեմ,
Որ քեզ ծին տված բնիկ գավառում
Կար մի մենաստան՝
«Սուրբն Կարապետ»,
Որի գոնեերը փակ էին ընդմիշտ կանանց սեռի դեմ։

Մենք կին չենք,
Այր ենք,
Տղամարդ ենք մենք,
Սակայն անօրեն մի նոր օրենքով
Փակ է մեր առջև
Ո՛չ միայն դուռն ու գավիթը վանքի,

Այլ գավա՜ռն ամբողջ
Եվ ո՞ղջ մի երկիր,
Որի անունից զրկված է նույնիսկ քարտեզը հիմա։

Մենք կին չենք,
Այլ ենք,
Տղամարդ ենք մենք,
Եվ ընդդեմ այս բաց անարդարության
Առայժմ մենք մեր աչքերն ենք փակում,
Բայց փակում այնպես,
Ինչպես փակում են մարդիկ մատները,
Եվ սոսկալում է դրանից.... բռունցք։

Ուստի իզուր է խոսքը երգումի։
Բնիկ գավառդ հենց որ ոտք դնենք՝
Քո Հացեկացը կպեղնենք բրլով,
Եվ տարոնական պարզած երկնի տակ
Սրբատաշ վնմը սուրբ թանգարանի՝ ձևակերպ կառնի,
Եվ դա կդառնա նո՜ր էջմիածին...

Դ

Սակայն... Եվ սակայն
Կա սուրբ Օշական,
Որ ազգի համար մի շատ վաղեմի
Հավասար է նոր Երուսաղեմի։

Աշուն է հիմա։
Եվ սրբատեղի տանող ծուռումուռ ճանապարհներին

Խաղողի վազն է իր տերևները փռել ամենուր,
Իր տերևները, որ շատ են նման
Անհայտ ձիերի սմբակից պոկված ժանգոտ պայտերի։

Այս հողի վրա օտար սմբակներ չեն դոփում հիմա։
Եվ եթե կաղնու անտառն է սակավ այս հողի վրա,
Ապա խաղողի և կաղնու տերևն իսկապես անչափ նման են
իրար։

Գաղտնասացության համար չեմ ծնվել,
Ես գիտեմ սակայն,
Որ օշականյան բանուկ այս ճամփով քայլող ամեն ոք
Անխոս-լռելյայն երգում է տալիս
Մի՞շտ զուգաշավիղ ընթանալ Քեզ հետ։
Անձնադատորեն նա հանձն է առնում
Արդյունավորվել մի՛միայն այնպես,
Որ հողագնդի բյուր լեզուներից
Անարտաքսելի մնա հավիտյան
Մեր այն բարբառը,
Որի գրերից կարելի է սուր եղաներ կռել,
Բայց մեխե՞ր նաև՝
Ցամելու համար հին ու նորօրյա պիղատոսներին։

Կանխասացության համար չեմ ծնվել,
Ես գիտեմ սակայն,
Որ սրբատեղի տանող այս ճամփով քայլող ամեն ոք
Եվ վա՜ղը պիտի գառնա մասնակից
Քո անկշռելի որքանությանը,
Իր հոգում զգա Քո մշտակայուն ներկայությունը,
Քո խկության հետ ինքն իրեն ձուլի՝

Փոխելով քայլն իր մոլորագրնաց,
Բեռնակիր դառնա մեր բեռ ու բարձին,
Դասալիք լինի բանակից վարձու,
Հայոց աշխարհի փափկասուն տիկնայք
Ավանդակորույս իրենց վարքի դեմ
Վերստին պիտի աչքերը բանան,
Հայոց աշխարհի այրերից երանք,
Ովքեր հուլաբար ճամփա են ընկել
Ու դեռ ծուլաբար գեգերում են լուռ՝
Օտար հովերի ապտակին հլու,
Պիտի դառնորեն դարձի գան դարձյալ՝
Խորհե՛ն հայերեն,
Ապրե՛ն հայերեն...

Ե

Հոռետեսության համար չեմ ծնվել
Եվ դեմ եմ հիմար լավատեսության,
Սակայն շատերից մեկն էլ ես՝ գիտե՛մ.
Դու էիր, որ մեզ անընտելուտ գյուտողդ ուսուցանեցիր,
Որ անհնարին վիճակն է միայն ծնում նոր հնար։
Ուստի հավատա, ո՞վ Հնարավոր։
Որ եթե մի օր — աստվա՞ծ չարասցե —
Գտած հնարդդ դառնա գործազուրկ,
Ասպարեզ կիջնի մեկն էլ անկասկած,
Որ սկիզբ կտա մի նո՛ր սխրանքի։

Թե ճիշտ է, որ Դու հայր ունենալով՝
Ջունեցար որդի,

Ճիշտ է առավել,
Որ զավակի տեղ ժառանգներ ունեա՝
Սերո՞նդ ու սերո՛ւցք,
Որոնք անբստգլուտ գյուտովրդ գիտեն,
Որ անհեարին վիճակն է միայն ծնում Եար հնար...

Ենչի՛ր ուրեմրն սուրբ շիրիմիդ տակ,
Քանզի արթուն ես մեր հոգիներում։

Չէ՞ որ ինչ-որ տեղ փոքրերս ու Մեծրդ
Հավասարվում ենք, դառնում աջակից.
— Դու... զործն ես արել,
Մենք... հանձն ենք առել...

12. IX, 17. IX. 61
Երևան

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Դու մեր մեծ երթի զավազանակիր
Եվ մեր պատմության մեծագո՛ւն դիվան,
Մեր ազնվության զուսանագիր,
Մեր մտքի պահեստ, հոգու օթևան։
Անցյալն պարզված դու մեր լապտող,
Եվ մեր խոսափող՝ գալիքին ուղղված։
Դու մեր սրբություն՝ կնքված Մեսրոպով,
Նարեկացիով օծված ու լուզված։

Դաժան դարերի ամլե՛ն մի ժամին
Շա՜տ բան է խլել մեզնից թշնամին։

Բարգելով վերքին վերք ու անարգանք,
Հեծության վրա մի նոր հեծություն՝
Խլել է մեզնից հանգիստ ու հարգանք,
Խլել է մեզնից փառք ու մեծություն,
Խլել կյա՛նքը մեր և... կյանքի՞ց էլ թանկ
Մեր հո՛ղը, հո՛ղը,
Մեր սուրբ հայրենի՛ն։

Շա՜տ բանից է մեզ զրկել վայրենին։
Մեր կերած հացին քսել է նա ժա՛նգ,
Բայց և... դարավոր բեկիկ վայրերի

Կորբատի լեղի կարո՞տն է քսել,
Մեր խումին խառնել մեր սուրբ մայրերի
Արցո՞ւնքը, սակայն... և արյո՞ւնը սև,
Բայց մենք չենք գրկվել... մեր բերնի համից.
— Քաղցրացել ենք մենք... մեր քաղցր բառով,
Մեր հայրենահամ անուշ բաբառով։

Շա՞տ բանից է մեզ զրկել թշնամին։
Իր ձեռքով նա մեր ձեռքերն է հատել,
Հատել է ականջ ու ոտնաթաթեր,
Այքեր է հանել դաշյունով իր սուր,
Կորել է նաև արմատից լեզուն,
Եվ սակայն... իզո՞ւր.
Չի՛ հատվել լեզուն,
Մնացել է նա՝ հատվելո՞վ անգամ...

Քե՛զ՝ մեր հայկական և արաժական,
Չկարողացան քեզ խլել մեզնից
Ո՛չ խարդավանքով արամեական,
Ո՛չ բյուզանդական սիրով անաղնիվ,
Ո՛չ Ահրիմանի ահեղ նետերով,
Ո՛չ Քրիստոսի մարդ-չմարզությամբ,
Ո՛չ Մուհամեդի ճմլիչ ոտերով.
Ո՛չ ճշմարտությամբ,
Ո՛չ էլ ստերով։

Չկարողացա՛ն քեզ մեզնից խլել։
Եվ պարզ է հիմա, հստակ ու որոշ,
Որ չե՞ն էլ կարող քեզ մեզնից խլել,
Ինչպես չեն կարող խլել մի գրոշ,

Որ հազարամյա դաժան մարտերում
Փողփողացել է միշտ էլ... արտերո՜ւմ։

Ո՜չ, քեզ ո՜չ մեկը կուլ տալ չի՜ կարող,
Ագահ կոկորդում դու խոր ես խրվում։
Ո՜չ, քեզ ո՜չ մեկը փուլ տալ չի՜ կարող,
Ինչպես երկինքը երբեք չի փլվում։
Չե՜ս խլվի երբեք,
Չե՜ս փլվի երբեք,
Ինչպես արյունից զո՜ւյնը չի խլվում...
Եվ ի՞նչ խաչագող գեռ պիտի հասնի,
Որ քեզ կամենա զողանալ մեզնից.
(Մի՛ ասա «մեզնից», «աշխարհի՜ց» ասա)
Չէ՞ որ դու հիմա ո՜չ միայն լեզու,
Այլև մասո՜ւնք ես,
Մասո՜ւնք ես մի սուրբ,
Անկողոպտելի մասո՜ւնք սրբազան՝
Դարերի խորքից դարերին հասած։

Մասո՞ւնք։ Ինչպե՞ս թե։ Մասունքս ո՞րն է։
Մասունքի տեղը տուփն է կամ հորն է։
Իսկ դու՝ դաբավոր, բայց և առույգ ես,
Գիսավոր ծուխ ես, բայց և խարույկ ես,
Ինչքան պարզ՝ նույնքան ասպետական ես,
Շատերի մեջ ես, բայց պետական ես,
Եվ դրանով իսկ դու պետքական ես
Այն պետությանը, որ վաղը պիտի
Լուսնից ու Մարսից ինքն իրեն դիտի...

29 I 62
Երևան

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

«Զքոյդ ի քոյոց քեզ մատուցանեմ»

Պահածոյացած՝ քո մեջ ես պահում
Արևագալի նշողումը շեկ,
Մեր երդիկների նշուլումը շեղ,
Շինականների խոտի շառայլը հորովելների անկյունագարձին,
Մանգաղի շողքի արծաթ բանվածքը արտի ոսկու մեջ,
Խուլրի երթևեկ ցոլափոխանքը ակնաշլացիկ,
Զինվորագրյալ քաջերի զենքի ճառագայթումը արփալույսի տակ,
Ատրուշանների բացխուփ բոցերի մարգանք — մրցումը բոլորանվեր,
Խաչերի ցոլքը ցնորաբերող,
Գրականներին ծաղկող մոմերի պլպլոցը պաղ,
Եվ փա՛յլը, նաև շառավիղո՞ւմը մեր տխուր-զվարթ ճաճանչող աչքի...
Դու քո մեջ ունես գայիսոնի շեշտ
Եվ գավազանի ուղղաձիգ սլացք,
Սկիհի բոլորք,
Կածանի ոլորք,
Ծամթելի հանգույց
Եվ ճարմանդի կեռ։

Հայոց աշխարհի փափկասուն կանայք
Քո մեջ են թողել նրբությունն իրենց,

Մամիկներն՝ իրենց գորովը ծփուն,
Ռամիկներն՝ իրենց կոպտությունն առողջ,
Ռազմիկներն՝ իրենց կորովը բազկի,
Եվ սեպուհները՝ կանչը մարտական։

Մեր մեհյանների և տաճարների
Խորաններին ես սիրով պարտական
Վեհության համար քո անկողոպուտ,
Որով այլևս օծված ես այնպես,
Ինչպես սարյակը իր ա՜յն ինքնաքամ օծանելիքով,
Որի գաղտնիքը, ձագուկից բացի, սատծո՜ւն չի հայտնում՝
Նման խուփբերան մեր վարպետներին ու ճարտարներին։
Սրանց հմայակ հմտություններն էլ քո մեջ են խայտում,
Ինչպես ջրերը ատորերկրրյա՝ նստվածքների մեջ։

Վառ Վարդավառի ջրցան կա քո մեջ
Եվ երբեք չանցնող սարսուռ—տամկություն,
Նավասարդական տոնախմբության ցնծում ու հափրանք,
Համբարձման ճախրանք երկնահրավեր,
Եվ ծառազարդի խորունկ խլրտում։
Հաչտից տեղերի հաշտարար խորհուրդ քրիստոսատիպ
Եվ գավիթների խում ու խրախճանք հեթանոսական...

Մեր գյուղացուերգակ ու վահագնապաշտ գոռող գուսանաց
Բամբ բամբիռների և թինդ թմբուկի ձայների թվով,
Մեր սիրախառով տաղերգու արանց, կանանց, կուսանաց,
Անհայտ ու հայտնի բույլքի համեմատ,
Հայրեններ կանչող մեր սիրախորով կորիճ լաճերի,

Եվ եղերամոր լալյաց երգերի միջև տատանվող
Բոլո՜ր անհամար ելևէջներին և անցումներին
Համապատասխան
Թրթիռներ ունես թավ ու թովչական, թախծոտ ու թավշե։

Մինչ կաքավները թողել են «կդա» և տոտիկ կարմիր՝
Կաքավոդների դաշրն ձևերն են քանդակվել քո մեջ,
Նրանց շղարշիկ շորի շրջյունն է, որ քեզ համակել
Ու տոգորել է շշուկ—շշունչի շատությամբ շռայլ,
Նրանց ըզգլխիչ հոտերն են հագել
Նրբերանգներիդ հանգերձը հարուստ,
Նրանց հագուստի հոտերն ըզգլխիչ,
Բայց և բույրերը այն բարձրապահյալ բժժանք—բույսերի,
Որ տիկնանց տիկին Մաթինկան տենչի տերն էին դառնում...

Այտաշիսական հարսանիքներում վերից տեղացող
Դահեկանների հնչում կա քո մեջ
Եվ փոխարինվող չիր ու չամիչի,
Ընկույզ—փշատի բազմաձևություն,
Տանիքներ ճոճող շուրջպար—գարձպարի
Եվ ճապուկ—ճարպիկ լարախաղացի
Գունագեղություն և կշռույթ ու չափ։

Սոխակի սխրանք ունես դու քո մեջ,
Դղիրդ աղացի
Եվ թարմ ալյուրի տաքուկ փափկություն,
Դու քո մեջ ունես նոր գալարիքի
Եվ աղջիկների մեջքի ճապկություն,
Ճախարակների և սանդերքների ձայներ անշփոթ,
Ծեր գզրարների ու մազմանների երգեցիկ ղարկեր՝

Մի արարչական նվագ, որի տակ
Աստծու բեղ-մորուքն իջնում էր ամպից
Ու դառնում զուլպա, թաղիք ու կարպետ...

Եվ ունես քո մեջ Եփրատի ծփում,
Երազ Երասխի,
Վանա-Սևանա տուրևառություն,
Լեռնաշղթայային մի ջինջ սառնություն,
Որից անցնում է լեզի վարունգի դառնությունն անգամ,
Եվ երկրի երես բարձրացող ջերմուկ,
Որ գրկիցությյան եյոմուտ ունի
Երկրամիջուկյան հրահեղուկի ոլորտների մեջ։

Եվ՝ ունես քո մեջ շամբի երերմունք,
Անսպասելի արարմունք ամպի,
Սոսյաց անտառի սաղարթի սոսափ,
Որի սաստկությամբ կամ հանդարտությամբ
Բախտ էին բանում նախնիները մեր.
— Ամենի՞ բախտը՝ անստո՞ւգ ու սո՞ւտ,
Եվ միայն քո՞նը՝ հիրավի՞ պայծառ...

Խորվիրապական տառապանքների թելադրանքով,
Մարտիրոսների, նահատակների
Ու վկաների տաժանքի հուշմամբ
Եվ մեռելոցի անանց կսկիծի պահանջով ազգու՝
Հոմանիշների մի ամբո՞ղջ վառ վխտում է քո մեջ,
Գոմշամաշերից սևություն առած,
Եվ անտակություն՝ Մասյաց վիհերից...

Եվ ունես խոսքեր ո՞չ միայն հայցի, այլև հաստատմա՞ն,
Ո՞չ միայն հոժար և անհիշաչար ձեռքի մատուցման,

Այլև հին քենի ու նոր վրեժի դժվարի՜ն խոսքեր,
Որ արջի նման խոր քուն են մտնում,
Բայց և արջի պես զարթնում են մի օր,
Երբ ծայր է առնում եռոցքը արյան՝
Կապկելով հոսքը ելման ջրերի։

Մակայն ավելի հպարտ ես ու շեն
Անխարդախ սիրո և մտերմության,
Բարու, գեղեցկի, հավատարմության,
Խանդաղատանքի և փաղաքշանքի,
Կերտման—կառուցման, ձգտումի—ջանքի,
Երազիկ վաղվա,
Հարազիդ հուսո
Խոսքերով խորունկ, ցոլացիկ ու պարզ,—
Յուրաքանչյուրից՝ մի ողկո՛ւյզ, մի խո՛ւրձ,
Յուրաքանչյուրից՝ մի երա՛մ, մի պա՜ռ...

Դու այսպիսի՜ն ես,
Այսպիսի՜ն ես դու։
Եվ երջանիկ է՝ ով քեզ կարող է կոչել ՄԱՅՐԵՆԻ։
Երանելի է՝ ով քեզանով է խոսում ու դատում...
Դու՝ իմ մայրենի՜,
Այսպիսի՜ն ես դու։
Եվ ես՝ երջանիկս ու երանելիս,
Ե՞ս չեմ, այդ ե՞ս չեմ քեզ տիրապետում։
Դո՜ւ ես, այդ դո՜ւ ես ինձ տիրապետում—
Հավիտյա՜ն և մի՜շտ,
Եվ ա՛յժմ նաև՝
Քեզանով իսկ քե՜զ փառաբանելիս...

29, 31. I 62

«ԵՎ ԱՅՐ ՄԻ՝ ՄԱՇՏՈՑ ԱՆՈՒՆ...»

Ա

Մենք կայինք նաև նրանի՛ց առաջ,
Եվ դարե՛ր առաջ։

Մենք բռնությունից խույս էինք տալիս՝
Բեղուն դաշտերին գերադասելով լեռները քարոտ.
Իսկ մեզ ոտնկոխ հետապնդողին դիտապատ անում
Եվ գրանով իսկ անուն ստանում՝
Կոչելով մեզ Հայկ։

Մենք անշունչ քարը դարձնում էինք ձուկ,
Զո՛վ,
Որ անջրդի լեռնալանջերի շիկացած հողից
Իր փորը վառած՝
Կխաբաց բերնով
Երկընքից անջուր
Գոնե անձրևի շիթ էր պահանջում։

Վեռը ծակելով՝
Մենք նրա միջով ջուր էինք տանում
Ու շռայլ բանում
Մեր այգիների այրի արդանդին։

Գ. ՍԵՎԱԿԻ ՁԵՌԱԳԻՐԸ



Էմմա Սաթունյանի արխիվից

Իսկ ամուլ կավին տալիս էինք մենք
Ձևը վարսանդի
Եվ կոչում կարաս,
Որի մեջ հետո լուղացնում էինք գարին մեր մաքուր,
Եվ մկրտության այդ ջուրը դեղին
Հարբածությունից նույնիսկ առավել
Զարմանք էր ազդում այն գոռոզներին,
Որ մեզ այնուհետ
Չէին հանդգնում կոչել «բարբարոս»։

Մենք համառ ոսկուն ստիպում էինք նաև մայրանալ՝
Դառնալ դիցուհու արձան անթելի,
Եվ այդ հլությունն անձնատուր ոսկու
Անվանում էինք Մայր զգաստության՝ Մեծքն Անահիտ։

Մենք տալիս էինք անհատակ վիհին մի նոր խորություն,
Երկնամուխ կիրճին՝ բարձրություն մի նոր
Եվ... կոչում Գառնի...

Մենք կայինք նաև Նրանի՛ց առաջ։
Մեր արքաների և իշխանների արածի վրա շարածը գրած՝
Նրանց գործն էինք դեռ շարունակում
Լարերի վրա բամբ բամբիռների
Եվ... դա անվանում երգ Վիպասանաց...

Արշակները մեր՝
Հայրենի հողին ոտքով չփվելով,
Լոկ հպարտության խոսքերով էին շուրթերը բանում
Եվ ըմբերանում տիրակալներին։

Մուշեղները մեր՝
Օտար զորությանն ընդդիմանալիս.
Նրանց հարեմը գերի առնելով
Ու ձեռք չտալով և ոչ մի կնոջ՝
Առնականության և վեհանձնության դաս էին տալիս,
Այնպիսի՛ մի դաս,
Որ ոսոխն անգամ անգիր էր անում...

Մենք կայինք նաև Նրանի՛ց առաջ։

Մենք աստղերն էինք մեր աչքով զննում,
Արփալույս էինք թելերով հինում,
Տաճարից եկնում ու թատրոն գնում,
Վայելում նաև հաճույքը վսեմ
Մեր այն պարուհի-կաքավողների,
Որոնց մարմինը նվագ էր լռած
Եվ որոնք նաև «երգեին ձեռամբ»...

Բ

Այո՛, մենք կայինք Նրանից առաջ։

Սակայն աշխարհի լայնքի վրայով
Մի չտեսնըված մրրիկ էր անցել։

Հրեա մի գունատ՝
Քշված իր երկրից,

Օտարականի ու հյուրի տեսքով,
Ինքն իրեն տարտավ աշխարհից աշխարհ։

Զորավոր էին աստվածները հին,
Այնքան զորավոր,
Որ անկեղծ էին ու չէին ստում։

Իսկ խեղճ ու աղքատ այդ երրայեցին
Եկավ շաղ տալու խոստումներ օդում,
Եկավ զինավառ գեղեցիկ ստով...

Միամիտ էին աստվածները հին,
Միամիտ այնքա՜ն,
Որ ծարավն իրենց հագեցնում էին լոկ արյամբ զոհի
Եվ իրենց քաղցը՝ նույն զոհի մսով։

Իսկ երրայեցին եկավ ասելու.
«Այս է մարմինն իմ. առեք ու կերեք։
Այս է արյունն իմ. ըմպեցեք սիրով»...

Ուղղամիտ էին աստվածները հին,
Ուղղամիտ էին՝
Պարզ դերձակի պես.
Իրենց հավատի հանգերձը երանք
Միշտ ձևում էին ճիշտ կյանքի վրա։

Իսկ երրայեցին եկավ կարելու
Մի համբերհանուր — կախարդիչ հանդերձ,
Որով պիտի որ հավասարվեին

Ե՛վ վախտ ու գեր,
Ե՛վ հաստ ու բարակ...

Ճշտախոս էին աստվածները հին,
Ճշտախոս էին՝
Երեխայի պես.
Մարդկանց մարդ էին նրանք անվանում,
Իսկ իրենց՝ աստված։

Իսկ երբայեցին ասաց. «Մարդ եմ ես»
Եվ... դարձավ աստված՝
«Մարդ եմ» ասելով...

... Զորավոր էին աստվածները հին,
Այնքա՛ն զորավոր,
Որ անկեղծ էին ու չէին ստում։
Իսկ պատմության մեջ կան ժամանակներ,
Երբ ով չի՛ ստում՝ պիտի կործանվի՛...

Դ

Եվ կործանվեցին աստվածները հին։

Մարդիկ,
Որ երեկ ունեին տարբեր աստվածներ բազում,
Պարտավոր էին հիմա ունենալ
Միայն մի՛ աստված,
Բոլո՛րը՝ լոկ մի՛, միայն մի՛ աստված։
Եվ չգիտեին,

Թե ո՞վ է այդ Մին
Եվ ի՞նչ է ուզում...

Արամազդների, Միհրերի տեղակ,
Բոցբեղ-բոցմորուք շեկ Վահագներին փոխարինելու
Եկավ մի հրեա սեմորուք-սևբեղ,
Եվ Աստղիկների, Անահիտների ու Նանեների
Երեկվա տեղում այսօր հաստատեց
Իր մորը գալո՞վ, թե՞ ամոթահար։
Եվ խոսում էին երանք մի լեզվով,
Որ չէ՞ր հասկացվում։

Մեհյանների տեղ ու բագինների,
Նրանց գեռ տաք-տաք մոխիրի վրա,
Հասակ նետեցին
Դեռևս անծեփ և փայտակուռ աղոթատեղիք՝
Իրենց խաչերը սուր մխրճելով
Նախ՝ սրտերի՞ մեջ,
Ապա՝ երկրնքի՞...
Ատրուշանների խուրձ-խուրձ բոցերի առատության տեղ
Կենտ-կենտ հասկերի շար աղքատությամբ
Պաղ-պաղ մոմերն են ուզում դառնալ հաց մի նոր հավատի,
Որ իրեն կոչում կամավորություն,
Բայց տարածվում է բռնությամբ անքող...

... Առանց հավատի կյանքում գլուրին չէ նույնիսկ մեռնելը,
Իսկ ապրելն... արդեն անկարելի է։

Մարդուց խլեցին իր հավատը հին,
Իսկ հավատը նոր հաստատվեց խոսքո՞վ,

Մի՛միայն խոսքով.
— Դեռ նորը չկա՞ր։

Ավերվեց հինը ու փլատակվեց,
Իսկ նորը միայն կառուցվեց խոսքո՞վ,
Մի՛միայն խոսքով.
— Դեռ նորը չկա՞ր։

Եվ այսպես՝
Հանկարծ ու դանդաղորեն
Ամե՞ն ինչ շրջվեց,
Տակն ի վեր եղավ,
Եվ կարգի բերել չէր կարող ոչ ոք.
— Ինքը շրջողն իսկ չէ՞ր կարող էլ, չէ՞։

Եվ այսպես՝
Կյանքից մնաց մի «մեղա»,
Որ պիտի նաև... բարձրը չհնչեր։
Եվ այսպես՝
Անցավ ողջ հարյո՞ւր տարի,
Որ կարճ է թվում, երբ զիրք ես կարդում,
Իսկ երբ ապրում ես և ամեն րոպե
Զգում ես մաշկի՛դ, զգում ես սրտո՛վ,
Ուղեղիդ բոլո՞ր ծալքերով՝
այնժամ...

Դ

Հենց այսպես էինք մենք ապրում այնժամ։

Հայաստան կոչված աշխարհն էլ արդեն
Լոկ անունով էր Հայաստան կոչվում։

Ջոհված արշառի տաքուկ սրտի պես
Մեր հողն էր կիսված
Ու բռնի քաշված
Երկու շիկացած ու սուր շամփուրի,
Որոնցից մեկը պարսիկն էր բռնել կրակի վրա,
Մյուսը բռնել էր մոմերի վրա նենգ բյուզանդացին։

Խորովվում էինք։
Արցունքի տեղակ
Մեր ճենճերն էին կաթում-կաթկթում,
Ասես կամենում իրենց խորովող կրակը մարել։
Սակայն ճենճերից—այդ ո՞վ չգիտի—չի՛ մարում կրակ,
Այլ բորբոքվում է մոլությամբ մի նոր։

Մե՛ր հողի վրա,
Մե՛ր երկրների տակ
Մենք գարձել էինք օտարի գաղութ։
Նույնիսկ մեր հորը երկրպագելու
Եվ կամ թե որդուն պագելու համար
Այլ արքունիքից պիտի խնդրեինք մի թույլտվություն,
Որ եթե հասներ՝
Պարտավոր էինք համարել շնորհ
Եվ շնորհակալ մնալ հավիտյան։

Հայաստան կոչված աշխարհը կիսված
Նստել էր արդեն
Իրար չկպած ծայրերի վրա ա՛յն աթոռների,
Որոնց տակ անտակ անդունդն էր բացվում։
Իսկ մեր մարմնավոր տերերը բոլոր
Ունեին լոկ մի մտահոգություն,

Լոկ մի խոհ բարձրը՝
Իրենց աթո՛ռը,
Գահո՛ւյքը իրենց
Եվ իրենց բա՛րձը։

Մի՞ն չզրկվել իրենց վերադաս տիրոջ շնորհից,
Զսպանակի պես
Այս միտքն էր նրանց վեր ու վար ճոճում։
Մի՞յն թե կառչել ու նստած մնալ
Իրար չկպած ծայրերի վրա ա՛յն աթոռների,
Որոնց տակ անտակ վիհն էր որոճում...

Ավերակվել էր երկիրը հայոց։
Ու եթե նրա տերերը տանու
Գեթ ունենային ազնվությունը իրենց նախորդի՝
Նրա պես պիտի մռռային նորեն.
«Ավերակացրս ո՞ւմ թագավորեմ...

Ն

Քաջերի սահմանն իրենց զենքն է հենց։
Քաջեր մի՛շտ էլ կան,
Ձե՞նք է հարկավոր։

Քաջեր մի՛շտ էլ կան,
Պետք է սապարե՛զ,
Որ նո՛ւյնպես չկար։

Կար միայն պարի՛սպ,
Որ տարածվում էր աշխարհից աշխարհ։

Եվ կային նաև ազնիվ ճակատներ,
Որոնցով երբեք պարիսպ չե՞ս քանդի...
Աշխարհի վրա իշխում էր արդեն մի ճշմարտություն,
Որ հարյո՜ւր տարի,
Հարյուր ձի՛գ տարի
Չէր կարողանում իր ճշտությունը կարգին հաստատել.
Մի ճշմարտությո՜ւն,
Որ ամեն վայրկյան
Կամա-ակամա հերքում էր իրեն՝
Անվերջ բացելով իր մերկությունը
Եվ իսկությունը։

Իսկ իսկությո՜ւնը...

Հիսուսը,
Որ մի հրեա էր ազնիվ,
Արդեն շա՜տ վաղուց գարձել էր իրոք
Մի բյուզանդացի խորամանկ ու նենգ.
Եվ նոր հավատի եղեմ-դրախտի պահուճանքի տակ
Հին Բյուզանդիոնը նոր հնարներով
Իր օտարակուլ գժոխքն էր տանում ուրիշ երկրներ,
Իր կայսերական մականն էր գարկում աշխարհի մեջքին,
Ա՛յն խեղճ աշխարհի,
Որ գարկի ցավից նույնիսկ տնքալու իրավունք չուներ,
Եվ տնքոցի տեղ
Դեռ «ալելո՜ւա» պիտի որոտար։

Իսկ իսկությո՜ւնը...

Հավասարության ու եղբայրության ազնիվ քարոզով
Ուրիշի տուն ու երկիր էր մտնում
Օտար վարք ու բարք,
Օտար ծես ու կարգ։

Իսկ իսկությունն չէ՞,
Որ զորքից հետո
Միշտ էլ լեզուն են մարտադաշտ հանում,
Եվ թեչ չի կարող ո՛չ մի զորք անել՝
Լեզուն է առում,

Իսկ իսկությո՞ւնը...

Նոր գաղափարը էլ գաղափար չէր,
Այլ մի կաղապար,
Մի նե՛ղ կաղապար,
Որ արդեն հարյուր տարի էր տևում.
Ո՛չ թե գաղափար,
Այլ մի կաղապար,
Որ երազն անգամ իր մեջ էր ձևում.
Ո՛չ թե գաղափար,
Այլ մի կաղապար՝
Ե՛վ մարմնի համար,
Որ շնչակտուր հևում էր, հևում,
Ե՛վ հոգու համար,
Որ վաղուց արդեն ազատ չէր թևում,
Ե՛վ լեզվի համար...

Գնթ լեզո՛ւն գործեր։
Մինչդեռ մեր լեզո՛ւն...

9

Իրավունք չկար երգել երգը մեր,
Որ դարեր ի վեր
Հնչել էր լեզվով մեր ոսկեղենիկ.
Ե՛վ մեն ու մենիկ՝
Սիրո խոսքերով,
Ե՛վ ուրախության տաճարների մեջ՝
Գինու հոսքերով,
Ե՛վ մեր յոթնօրյա հարսանիքներին՝
Մեր փակ բակերում,
Թաց տանիքներին,
Իրավունք չկար նաև նվագել՝
Ո՛չ վիոլի վրա,
Ո՛չ էլ բամբիռի,
Այս կյանքի համար հոգացի՞ր՝
Պիղծ ես,
Ե՛վ անօրեն ես,
Ե՛վ բանադրված,
«Ամե՜ն ինչ արա հանուն ա՜յն կյանքի,
Որ քեզնից հետո, հետո է գալու»...

Թատրո՞ն ես գնում՝
Ուրեմն պիղծ ես,
Կեր ու խո՞մ անում՝
Ուրեմն պիղծ ես։

Պարի՞ նայեցիր
Եվ կամ պարեցի՞ր՝
Ուրեմն պիղծ ես։

Սիրասթա՞փ եղար,
Նոր սե՞ր արեցիր՝
Ուրեմըն պիղծ ես։
Այս կյանքի համար գեթ մի՞տք արեցիր՝
Ուրեմըն պիղծ ես։
«Ամե՞ն ինչ արա ա՛յն կյանքի համար,
Որ քեզնից հետո, հետո է գալու»...

Եվ այս ամենի՛ց, այսքանի՛ց հետո
Իրավունք չկար մինչեկեկ լալու։

Որդո՞ւդ ես սգում՝
Ուրեմըն պիղծ ես։
Ողբում սև օ՞րըդ՝
Ուրեմըն պիղծ ես։
Իրենց իսկ տված ցավի՞ց ես լալիս՝
Անօրեն ես դու,
Արժանի մահվան։
Դավանանք կոչված դավի՞ց ես լալիս՝
Անօրեն ես դու,
Արժանի մահվան։
«Մտածիր միայն ա՛յն կյանքի մասին,
Որ քեզնից հետո, հետո է գալու»...

... Եվ այս ամենի՛ց, այսքաների՛ց հետո՝
Իրավունք չկար մինչեկեկ... լալու։

Է

Իրավունք չկար
Արյան փոխարեն գեթ արցունք ոթելու։

Եվ ի՞նչ էր մնում։
Այլ բան չէր մնում,
Քան թե աղոթել։

Աղոթել նրան՝
Այն նոր աստրծուն,
Որ խոստումներից ալք իսկ չէր բացում,
Բայց ողջը՝ այնտե՛ղ,
Բայց ողջը՝ հետո՛,
Եվ ոչի՛նչ՝ հիմա,
Եվ ոչի՛նչ՝ ցածում։

Այլ բան չէր մնում,
Քան թե աղոթել։

Բայց նրանք նույնիսկ իրենց աստրծուն
Աղոթում էին... օտար խոսքերով,
Խոսքեր՝ ոչ պակաս անհասկանալի,
Քան ինքն այդ աստված։

... Եվ մարդկանց հոգնած սրտերի վրա,
Որ երեկ այնպե՛ս հուզառատ էին,
Այնպե՛ս ղղայիկ,
Իջել էր արդեն անտարբերություն մի կործանարար
Ե՛վ վաղվա հանդեպ,
Ե՛վ ապագայի։

Ոչ ոք չգիտեր՝ վաղն ի՞նչ կբերի։
Եվ ապագայի երաշխիք չկա՞ր։
Բերք չէին տալիս արտերը բերրի։

Նույնիսկ խոստացյալ երկինքը վերին
Դարձել էր մի կեղծ — աստվածան նկար։

Անդընդանում էր մի անհայտություն,
Անորոշություն մի ամենաքամ,
Որ վատ է անգամ որոշյալ մահից։
Մի անհայտությո՛ւն, որ ինքն էր դարձել
Երկրի իրական տիրակալը շար։
Եվ կործանումի սուր հոտ էր փչում
Ո՛չ միայն հացից, ջրից ու հողից,
Այլ նաև օդի՛ց ու քամո՛ւց անգամ։

Պետք էր, շա՜տ էր պետք ինչ-որ բան անել
Սակայն ի՞նչ անել և ինչպե՞ս, ինչպե՞ս։

Ու բոլորն էին այդ հարցը տալիս,
Իսկ պատասխանող չկա՛ր ու չկա՛ր...

Ը

Եվ այդ պահին էր, որ աշխարհ եկավ
Նա՝
Այր մի՝
Մեսրոպ Մաշտոց անունով։

Որտեղի՞ց եկավ,
Ի՞նչ ակից բխեց։
Եվ ինչպե՞ս եկավ,
Հոսեց ի՞նչ հունով։

Այդպես՝ արցունք է ծնվում աչքի մեջ,
Երբ որ աչքի մեջ ընկնում է ավազ։
Այդպես՝ դառնում է ավազն ապակի,
Եվ ապակին է հայելի դառնում։

Այդպես՝ արևը ամենից առաջ
Լուսավորում է բարձրարձրձ ծառի
Կատարին թառած թռչունի բուկը։

Այդպես՝ գոյության ահեղ պայքարում
Անփոփոխ պահած իր ներքինն էլի՝
Գազանն է փոխում իր մաշկի գույները,
Եվ դա թվում է անսպասելի...

Նրանց ծնունդը միշտ էլ թվում է անսպասելի
Եվ հետո մարդկանց դարեր շարունակ զարմանք
պատճառում,
Բայց Նրանք կյանքում միշտ էլ ծնվում են լոկ այն
պատճառով,
Որ անչափ շատ են սպասել Նրանց։

Ժողովրդի մեջ ննջում են Նրանք,
Ինչպես ջրի մեջ՝ ահեղ գոլորշին,
Ինչպես ընտանի աքաղաղի մեջ՝
Իր իսկ երբեմնի թռչունությունը,
Ինչպես մանուկի պարապ բերանում՝
Ակռա—ատամը։

Նրանք ծնվում են իրենց ծնողի անօգնությունից,
Որպեսզի դառնան նոր զորեղություն։

Նրանք ծնվում են ինչ-որ հանճարեղ մի հոգնությ
Որպեսզի դառնան հանճարեղություն։
Նրանք ծնվում են, որ ապացուցեն,
Թե վերջը մի տեղ դառնում է սկիզբ։

Նրանք ծնվում են, որ ապացուցեն,
Թե հրաշք չկա՞,
Կա միայն կարի՞ք։
Նրանք ծնվում են, որ ապացուցեն,
Թե այնտեղ է լոկ սխրանքն սկսվում,
Ուր վերջանում է ամե՞ն մի հնար...

Թ

Այսպես էլ ծնվեց մեկը նրանցից,
Ծնվեց նա՝
Այր մի՝
Մաշտոց անունով։
Եվ նա չծնվեց, որ ավելացնի
Հարց տվողների քանակն անպակաս։
Նա եկավ աշխարհ՝ պատասխանելու,
Եվ պատասխանը գտավ իսկապես...

... Քաջերի սահմանն իրենց զենքն է հենց։

Քաջեր մի՛շտ էլ կան,
Զե՞նք է հարկավոր։

Քաջեր մի՛շտ էլ կան,
Պետք է ասպարե՞զ։

Եվ նա էր ահա, որ ձևավորեց
Մի զենք ժանգախուլս,
Եվ ծովավորեց
Ասպարեզ մի նոր,
Ուր թույլ-ուժեղի,
Շատ ու սակավի,
Քիչ ու բազումի
Մրցության համար ասպարեզ չկա՞,
Քանզի նորատիպ այդ մաքառման մեջ
Այրուձիի տեղ մարքերն են կռվում,
Թանաք է հեղվում արյան փոխարեն,
Եվ հաղթանակը կռվում է Մատյան...

Մենք կայինք, այո՛, նրանից առաջ։
Սակայն նա ծնվեց,
Որ գա ու դառնա ինչ-որ նոր Սկիզբ։

...Նրանից առաջ կային աստվածներ՝
Երկրքի, սիրո, պտղավորումի,
Ինչպես փոթորկի, նաև... դպրության։

Եթե բոլորը՝ մինչևիսկ ստույգ,
Վերջինքս սուտ էր, սուտ ստուգապես.
— Աստված կար, սակայն դպրություն չկա՞ր։
Նա՝ հավատավորն իր նոր հավատի,
Դպրության մեր սուտ աստծուն վրանդեց
Եվ Ինքը մնաց նրա փոխանակ։
Բայց մինչ դպրության հին աստվածը մեր
Շարունակ միայն մի գործ էր անում՝

Սարգսանց հոգին էր առնում ու [illegible]
Սա եկավ, որ մեզ հոգի՞ պարգևի [illegible]

Այո՛, մենք կայինք Նրանից առաջ.
Հզոր թե տկար՝
Մարմին էինք մենք։

Սակայն նա եկավ, որ Հոգի՞ դառնա,
Շոշափվո՞ղ հոգի,
Եվ անմե՞ռ հոգի։

Այո՛, մենք կայինք Նրանից առաջ.
Քիչ թե շատ՝ կար հաց,
Եվ ունեինք ջուր։

Սակայն նա ծնվեց, որ Սնո՞ւնդ դառնա։

Ինվե՛ց, որ ծնե՞նք,
Եղա՛վ, որ լինե՞նք,
Եվ անմահացա՛վ,
Որ անմահանա՞նք...

Ժ

Կխսված էր արդեն հայրենիքը մեր,
Եվ հետո պիտի այդպես էլ մնար.
Դարերով հեղված մեր արյունը սուրբ
Պիտի ապարդյուն կորչեր ու գնար։
Դեռ պիտի գային օրեր ահավոր.

Մեր հողը պիտի մեզ կարոտելուց
Պատվեր եղինջով ու փշով խայթիչ,
Իսկ մեր երկինքը՝
Մեր աչքից զրկված,
Պիտի որ ինքն էլ իր զուգսից զրկվեր,
Հետո պիտի մեզ խաբեին այնպե՛ս,
Որ հին խաբերան՝
Նոր բյուզանդացին,
Զարմանար ինքը,
Հետո պիտի մեզ...

Միջահատված էր մեր հողը բնիկ,
Ճեղքված էր արդեն հայրենիքը մեր,

Եվ Նա չծնվեց ինչ-որ մի մորից,
Նա հենց այդ ճեղքից ծառացավ հանկարծ,
Որ ճեղքը լցնի գեթ ինքն իրենով,
Եվ այդ ճեղքը Նա լցրեց իսկապես.
Մեր բաժան-բաժան հողերը նորից
Այդ Նա էր միայն, որ բերեց իրար
Ու միավորեց .. արդեն մեր մտքո՞ւմ,
Եվ այդ օրից վեր
Ու մինչև այսօր
Այդ միացումը մնում է անխախտ՝
Ընդդեմ ճչացող այն խախտումների,
Որ բախտն է անում սուտսփո՞ւա այնպես,
Եվ անում անձայն մի քմծիծաղով,
Որի տակ պիտի ամոթն իր ծածկի,
Բայց իզո՞ւր.

Ծածկել չի կարողանում,
Ինչպես չի ծածկում ծածկույթը խոտի
Ճահճի գոլորշին՝ քրտինքն ամոթի...

ԺԱ

Ցունեիկը արդեն պետ ու պետությունն,
Ծաղրանկար էր եղածը արդեն՝
Գծված ձեռքերով երկու նկարչի,
Որ ատում էին իրար ոչ պակաս,
Քան թե մենք իրենց։

Հետո մենք պիտի զաղութ դառնայինք՝
Գաղութի մարզպան—կառավարիչով։
Հետո մեզ պիտի դարեր շարունակ
Տաներին անվերջ անկումից անկում,
Մեր մեջքի վրա երկանք աղային
Եվ սուիպեին, որ ժպտանք նաև։

Հետո մենք պիտի մեր շենից զրկված՝
Քաղաք շինեինք ավերն ուրիշի։
Հետո մենք պիտի մեր հերկից զրկված՝
Հերկեինք օտար կորդ ու առապար։
Հետո մենք պիտի մեր ոտնահետքի
Դրոշմը դարձրած յուրովի դրոշ՝
Մխեինք բոլոր լայնքերի վրա
Երկիր կոչեցյալ այն կլոր գնդի,
Որտեղ պիտի որ ամեն ճանապարհ
Վերստին բերի իր տեղը նախկին,
Բայց մեզ... հայրենիք չբերե՞ց երբեք...

Ջունեիկք արդեն պետ ու պետություն.
Հայրենյաց գահը փլվածք էր տվել։

Եվ նա չծնվեց ինչ-որ մի մորից.
Նա այդ փլվածքից բուսնեց սխրանքով,
Եր այդ փլվածքը ողջանա նորից։
Եվ այդ փլվածքը իրոք ողջացավ։
Այն, ինչ որ անել չկարողացան
Արշակ—Վաղարշակ,
Մուշեղ ու Մուշե,
Սա՛ արեց միայն՝ անզեն ու անզորք.
Մեզանից խլված մեր պետության տեղ
Ստեղծեց մի նոր՝
Ջեղյա՜լ պետություն,
Թա զավորությունն մի հզորազոր՝
Ո՛չ թե մեզանից խլված հողերի,
Մեր բաժան-բաժան հայրենու վրա,
Այլ մեր անբաժա՛ն,
Մեր անկիսելի՛,
Երբե՜ք չխլվող հոգիների մեջ։

Եվ այնուհետև անվախճան եղավ
Թագավորական նրա տունը մեծ,
Եվ մեր հոգևոր թագավորության
Գահին բարձրացող ամե՜ն թագավոր
Ծնվեց նո՛ւյն տնից,
Նո՛ւյն ցեղից սերեց
Եվ պատվով-փառքով-վեհությամբ կրեց
Նո՛ւյն տոհմանունը՝
Մեսրոպ-Մաշտոցյա՜նք..

ԺԲ

Այսպե՞ս ծնվեց Նա։
Բախտի հակառա՞կ,
Թե՞ վայրկենական նրա զղջումով,
Նա եկավ, որ մեզ վերադարձնի
Այն, ինչ խլել էր նույն բախտը երեկ։

Առանց հավատի հեշտ չէ մեռնելը,
Իսկ ապրելն... արդեն անտանելի է։

Եվ մեր կործանված հին հավատի տեղ
Մեզ նո՛ր հավատով գինեց վերստին։
Էժան-ծախուի, անցնող—վատի տեղ
Բերեց չքերվող-անջինջ-հավատին։
Սուտ ու կեղծիքի ծծակի տեղակ
Մեր մանկանց տվեց անցամաք ստին՝,
Որով և նրանք կրկնամայր եղան.
Ով օրով՝
Նրանք մեծացան տարով,
Ով տարով՝
Նրանք մեծացան դարով,—
Եվ բիրտության տեղ փոխեց կրթություն,
Պարապմունքներով պարապը լցվեց,
Ու մեկ օր անգամ չորեքթաթ չարած՝
Մի արագոտրն կայտառ քերթություն
Էնդոստնեց մեկեն ու վազքի լծվեց։

Մեր փլատակված—փլուզված տեղ
Նա նո՛րը կերտեց, նո՛րը կառուցեց.
Նավաբեկված ու սուզված տեղ
Անտակ հատակից նո՛րը հարուցեց.
Արգելված երգի զվարթ զույնի տեղ
Խորունկի վրա տրտումը հինեց.
Անմիտ մխոումով քանդված բույնի տեղ
Հոգեբնակման մեր տունը շինեց.
Օտարի գենի ու զորության դեմ
Նո՛ր հզորությամբ-նորությա՞մբ զինեց՝
Զենքով մի նորոգ և սքանչելի,
Որի դեմ պիտի դառնային անզոր
Նետ ու յաթաղան,
Փղեր ու տանկեր,
Եվ որ մեր ոգու անբաս կանչերին
Պիտի որոտով միշտ արձագանքեր։

Դա գե՞նք էր արդյոք,
Թե՞ լուլա էր, մի լո՛ւյս,
Որ օտար հոգուից երբեք չհանգավ,
Այլ քանի գնար՝ պիտի որ հանգեր
Անծուխ-զտաբոց անշեջ կրակի
Եվ տառապալից մեր օրերի մեջ
Վիներ կենարար զվարթ կերակի։

Մեզ սպառնացող վտանգի չափ մեծ
Եվ այդ վտանգից նաև ահագին՝
Նա օտար հրի ճարակի դիմաց
Մեր ինքնությունը կոփեց ու կռեց.

Ոտաբ եկամուտ վարակի պիտաց
Մահ համտես արած մեր ամենիմաց
Առողջությունը որմի պես գրեց.
Դրեց խարդախված կաթի դեմ՝ մեքան,
Քանակի դեմ՝ թև,
Թվի դեմ՝ թռիչք,
Արյան դեմ՝ թանաք,
Սրի դեմ՝ գրիչ,
Եվ դարանի դեմ՝ Մատենադարան...

Եվ մենք՝ նրանով միշտ գինավառված,
Միասին եղանք՝ ցիր ու ցան արված.
Անվերջ կրելով վարկեր ու հարված,
Նույնիսկ հաղթվելով ժանտ բանակներից՝
Ժանտերից ժանտին հաղթեցինք կյանքում-
Հաղթեցինք դաժան ժամանակներին.
Կանգուն առ կանգուն թաղվելով հողում՝
Հառնեցինք դարձյալ,
Մնացինք կանգուն.
Անվերջ ընկնելով՝
Վերաթևեցինք.
Մեռնելով անվերջ՝
Գոյատևեցինք...
Եվ հիմա արդեն այդ մե՛զ չեն պեղում.
Այլ մենք ենք պեղում.
Այդ մե՛զ չեն հիշում,
Այլ մենք ենք հիշում.
Մե՛զ չեն վկայում,
Մենք ենք վկայում՝

Հասնելով ուրիշ ժամանակների,
Երբ մենք՝ տառապած միշտ քանակներից,
Հպարտ ենք արդեն մեր նոր որակով.
Մենք՝ բռնազատված արբանյակության,
Հպարտ ենք հիմա այն արբանյակով,
Որի ծիրի մեջ կա և վագքը մեր.
Եվ հպարտ՝ նաև հրթիռով այն նոր,
Որի թիռի մեջ կա հրաշքը մեր...

Այսպե՞ս ապրեցինք
Եվ այստե՛ղ հասանք։
Այսպե՞ս շիթվելով՝
Դարձանք զուռ հոսանք։
Մենք՝ հինը հնից,
Նորացա՞նք նորից։
Եվ այս ամենը՝
Նրա՛ շնորհիվ...

ԺԳ

Այսքանից հետո ի՞նչ կուզես Նրան.
Մեր կեռմանաշատ երթուղու վրա
Մի նշանացի՞ց,
Մի սլո՞ւն,
Կամ թե ձո՞ղ,
Ինչ-որ գրերի ինչ-որ ստեղծո՞ղ։

Ու եթե պիտի գիր ու տառ հիշվի,
Ապա Նա ինքն է այն մեծատառը,

Որով հասարակ ու պարզուկ բառը
Անում է—հասնում խորհրդանիշի,
Եվ... մարդը ձգվում ու դառնում է Մարդ,
Անցողիկ մարտը՝ հավերժական Մարտ,
Խեղճ տքնությունը՝ զորեղ Տքնություն,
Ինքնությունն անուժ՝ հուժկու Ինքնություն,
Պաշտողը՝ Պաշտող,
Իսկ հայը՝... Մաշտոց,

Մաշտո՜ց...
Այսինքքն՝ Ա՛յր մի, որ եկավ ապացուցելու,
Թե մի տեղ վերջը դառնում է Սկիզբ,

Այսինքքն՝ Ա՛յր մի, որ ապացուցեց,
Թե հրաշք չկա՜,
Այլ կա լոկ կարի՛ք,

Այսինքքն՝ Ա՛յր մի, որ ապացուցեց
Եվ կոչ է անում ապացուցելո՜ւ,
Որ այնտեղ է լոկ սխրանքն սկսվում,
Ուր վերջանում է ամե՜ն մի հնար...

1962, փետրվար,
Երևան

ԹՐԻ ԴԵՄ՝ ԳՐԻՉ՝

ՄԱՇՏՈՑԻ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

«Վավ սկիզբը գործի կեսն է»,— այս ծանոթ խոսքի ճըշմարտության կշիռը ոչ մի տեղ թերևս այնպես չես զգում, ինչպես Մաշտոցի մասին գրելիս։

Ինչպե՞ս սկսես։

Թերևս ամենաճիշտը հենց այդ Սկիզբ *բառն է։*

Ճիշտ է, որ Մաշտոցից դարեր առաջ էլ հայերը կային։ Ճիշտ է, որ նրանք ունեին պետականություն և բանաստեղծաստ, գիտեին կոթողներ կառուցել ու կերտել բազիններ, քամում էին գինի և ձուլում արծաթներ, թատրոն էին հաճախում ու վայելում զեղեցիկ հաճույքն այն պաքուհի-կաքավողների, որոնք «երգեին ձեռամբ»։

Երևակայությունն ու պատկերացումը նման լինելով՝ նույնը չեն։ Երևակայում են նաև մանուկները, մինչդեռ պատկերացնել կարող է միայն հասուն մարդը։

Մաշտոցը եկավ գառնալու մեր պատկերացումը. պատկերացումը մեր իսկ գոյության, մեր իսկության։

Երեխաները ծնվում են, ատամ հանում ու քայլում, սկսում են խոսել ու պատշաճորեն դատել, բայց նրանց համար այդ

** Մ. Մաշտոցի 1600-ամյակի առթիվ կարգացվել է որպես զեկուցում (Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում)։*

երեք-չորս տարին փաստորեն մնում է իրենց կյանքից դուրս, որովհետև ոչինչ չեն հիշում իրենց այդ երեք-չորս տարուց։ Եվ նրանց ծննդյան օրը ըստ էության այն օրը չէ, որ նշում են նրա ծնողները. հիշո՞ւ կլիներ, եթե նրանք իրո՞ւք իրենց ծնունդ նշեին այն օրը միայն, երբվանից հիշում են իրենց։

Այն, ինչ մարդու կյանքում չափվում է տարով, ժողովուրդների կյանքում չափվում է դարով։ Նախամաշտոցյան մեր կյանքը անցավ առանց «ինքնահիշողության»։ Եվ Մաշտոցի էր, որ եկավ դառնալու մեր հիշողությունը. հիշողությունը մեր իսկ գոյության, մեր իսկ մասին։

Եվ սա չափազանցություն չէ, այլ պարզ եզրահանգումը 16-դարյա մեր կյանքի, հետևությունը մեր ոսկրապատույտ պատմության՝ Մաշտոցից մինչև այսօր։

Հիրավի. ո՞վ էր Մաշտոցը։

Հայ եկեղեցին, որ մեր պետականության վերացման պատճառով մնում էր միակ համազգային կազմակերպությունը, դարեր շարունակ ամեն տարի նշել ու նշում է «Սուրբ Թարգմանչաց» տոնը։ Ուրեմն դարեր շարունակ Մաշտոցը գնահատվել է նախ և առաջ իբրև Թարգմանիչ Սուրբ գրոց։ Հայ պատմագրությունը առավել շեշտել է այն, ինչ գիտեն մեր դպրոցականներն էլ. Մաշտոցն է հայ գրերի ստեղծողը։

Մեզանից առաջ և մեզանից հետո շատ ժողովուրդներ են ստեղծել իրենց գիրը և թարգմանել Աստվածաշունչը։ Եվ բոլոր ժողովուրդների կյանքում էլ ինչպես սեփական Այբուբենի, այնպես էլ Աստվածաշնչի թարգմանությունը խիստ կարևոր եղել է նշանակալից իրադարձություն։

Իսկ մե՞զ համար։

Ուրիշ այբուբենների ստեղծողների հետ Մաշտոցին ամենից շատ համեմատել են օտարները։ Ահա Մարկվարտը՝ գեր-

Յանացի աշխարհահռչակ արևելագետը, որ հմուտ էր արևելյան ու արևմտյան բազմաթիվ մեռած ու կենդանի լեզուների և գիտակ նույնքան Ակրուբենների։

«Եթե նկատենք այն պարագաները, որոնց տակ Մաշտոց և Սահակ իրենց մտքի գործունեությամբ եկեղեցական ու ժողովրդական ինքնագիտակցության զարթուցին հայ ազգը, և այս գործքին հետ համեմատության դնենք դանայյան այն պարզևը, զոր Պեպինոս Ֆրանկ՝ քաղաքական ու եկեղեցական ամեն միջոց լիապես իր ձեռքին ունենալով՝ նվիրեց գերման ժողովրդյան, այն ատեն թե Պեպինոս և թե յուր զինակիրը Վինֆրիդ խեղճ թզուկներ կերևան համեմատությամբ մտքի այդ հսկաներուն։

Գերմանացի գիտնականի մեջ չէր կարող խոսել հայկական հպարտությունը, ուր մնաց թե սնափառությունը։ Գերմանացի գիտնականը պարզապես սոսկ քարտուղարություն է անում մի ժողովում, որ երկարածգվեց դարերով, ժողով, որի օրակարգում կար մեկ հարց միայն, քննարկվում էր մեր լինել կամ չլինելու խնդիրը։

Ահա թե ինչու այսօր, 16-դարյա մի բարձունքից նայելով, Մաշտոցը մեզ երևում է նախ և առաջ իբրև մի վիթխարի բաղամագետ, որի շահած անարյուն ճակատամարտի հետ չի կարող համեմատվել մեր սպարապետների փառավոր հաղթանակներից և ոչ մեկը։

***

Մաշտոցը, այո՛, հայ նշանագրերի գյուտարարը և հայ դպրության հիմնադիրը լինելուց առաջ, մեր մեծագույն քաղաքագետն է։

Զափազանցությո՛ւն կլինի արդյոք, եթե ասվի, որ քաղաքականության մեջ հայերս առանձին ընդունակություն չենք ցուցաբերել։ Ավելին. մեր և՛ հին, և՛ նորագույն պատմությունը լեցուն է հակառակն ապացուցող անջնջելի փաստերով և անշտկելի իրողություններով։ Այնքան շատ գործածելով «աջ»-ը, որից բարդվել ու ածանցվել են հարյուրավոր այլ բառեր ու դարձվածքներ՝ քաղաքականության մեջ մեր նախնիները գործել են մեծ մասամբ ձախ ձեռքով։ Ուստի և՝ ձախորդություններ, ձախավերություն, ձախողակություն... Եվ մեր քաղաքագիտական մտքի պատմությունը հիրավի արդահատելի կլիներ, եթե արձանագրած չլիներ մեկ-երկու հաղթանակ։ Բայց արդար լինենք և ավելացնենք, որ այդ մեկ-երկու հաղթանակի համար քիչ է թվում նույնիսկ այնպիսի ածականը, ինչպիսին է «մեծ»-ը։ Այդ հաղթանակները բախտորոշիչ էին, վճռական։

«Որտեղ հաց՝ այնտեղ կաց»։ Չի կարելի կասկածել, որ այս տխուր փիլիսոփայությանը մեր ժողովուրդը հասել է իր պատմության վերջին հազարամյակին, երբ ստիպված էր կրկնել «Թափառական հրեա»-ի աննախանձելի բախտը։ Այս առածից առաջ դարեր շարունակ նա կրկնում էր մեկ ուրիշ իմաստություն, իմաստությունն այն հրեայի, որին դեռ չէր կպել «Թափառական» մակդիրը. «Ոչ միայն հացիւ կեցցե մարդ...»։ «Ոչ միայն հացիւ», ոչ միայն մարմնով, այլ նաև ոգով, այլ նաև «բանիւ»։ Եվ ժողովուրդների ու ազգերի գոյության միակ երաշխիքը միայն հողը չէ կամ զորությունը։ Կան նաև այլ գործոններ, որոնք պակաս վճռական չեն։ Բաբելոնացիք ու ասորեստանցիք, խալդերն ու խեթերը չունեցան հրեաների ծանր բախտը՝ չկորցրեցին իրենց հողն ու հայրենիքը։ Նրանք կորան իրենց խակ հողերի վրա, որովհե-

տև ինչպես մարդիկ, այնպես էլ ժողովուրդները գոյատևում են «ոչ միայն հացիւ», այլ նաև «բանիւ»։

Եվ իսկապես էլ. ինչպես հնագույն, այնպես էլ նորագույն ժամանակներում աշխարհակալները իրենց հարևաններին ձուլում են ոչ միայն մեծությամբ ու զորությամբ, այլ նաև այն համընդհանուր-ընդհանրացնող գաղափարով, որ տարածում են այդ աշխարհակալությունները։

Եթե հույն-հռոմեական ու հին հայկական պանթեոնի տարբերությունը միայն անունների մեջ էր, ապա հայ-իրանական պանթեոնում այդ տարբերությունն էլ համարյա չկար։ Եվ, անտարակույս, խելացի էր Տրդատ Գ-ն, որ այդ համընդհանուր-ընդհանրացնող հնթանոսությանը կուլ չգնալու համար իրեն պատեց փշերով՝ Հիսուսի փշեպսակով։ Եվ պակաս խելոք ու հեռատես չէին նրա քրիստոնյա հաջորդները, որոնք երկու դար հետո տեսան ու հասկացան, որ համընդհանուր-ընդհանրացնող քրիստոնեությունը դարձել է նույնպիսի ահավոր վտանգ, ինչպիսին մի ժամանակ հնթանոսությունն էր։

Անկարելի է չափազանց ետ մնալ մարդկության ապրելակերպի և մտածելակերպի ընդհանուր աստիճանից, վաղ թե ուշ այդ աստիճանին են կանգնում բոլոր ժողովուրդներն ու ազգերը։ Քրիստոնեությունը չէր կարող չտարածվել ու չիշխել Հայաստանում։ Բայց քրիստոնեությունը, ինչպես նաև ամեն մի այլ մեծ ուսմունք, մի անաստատ վերարկու չէր։ Քրիստոնեությունն էլ ուներ իր աստատը, որ կոչվում էր հռոմեականություն կամ բյուզանդականություն։ Քրիստոսի մեկ կամ երկու «բնության»՝ նրա «մարդ, թե աստված» լինելու վեճի տակ Հռոմն ու Կ. Պոլիսը առաջ էին մղում այն քաղաքականությունը, որը բնորոշող բառն էլ ստեղծվեց դեռ այն

ժամանակ՝ «իմպերիալիզմ»։ Քրիստոսի երկնային արքա-
թյունը փաստորեն մի երկրային իմպերիա էր։ Եվ Քրիստոսի
խաչը երկրից երկիր էր տարվում ոչ թե աղոթատեղիների
գմբեթներին տնկվելու, այլ այդ երկրների անկախությունն ու
ինքնությունը խաչելու համար։ Այդ խաչից խուսափելն ան-
հնարին էր մանավանդ Հայաստանի համար, որովհետև աշ-
խարհագրության չեղյալ ասուծո կամքով Հայաստանն էր
այն կենտրոնակետը, որի վրա խաչանվում էին հռոմեական
երկաթ գայլոնն ու պարսից հաստաբետ մականը՝ ստեղ-
ծելով մի վիթխարի խաչ։

Տրդատը հասկացավ, որ իր ահեղ հարևաններին կույ
չդնալու համար ամեն մի փոքր ազգություն պիտի շեղտի իր
տարբերությունը. հեթանոսությանը նա դիմադրավեց քրիս-
տոնեությամբ։ Արդեն քրիստոնեությունն էր դարձել մի ընդ-
հանրացնող վտանգ։ Անհնարին էր կրկին վերադառնալ հե-
թանոսության, մանավանդ որ պարսիկները դեռ երկու-երեք
դար հետո միայն պիտի հեթանոսությունից իսլամին անց-
նեին։ Ուրեմն այլևս ինչպե՞ս շեղտել այն տարբերությունը,
առանց որի անկարելի էր գոյատևել։ Եվ տրդատյան դարձից
երկու դար հետո մեր նախնիք գտան այդ «ինչպես»-ը, որ
մեր ազգային հին քաղաքականության հազվադեպ հաղթա-
նակներից մեկն է։

Այժմ ծիծաղելի են թվում բոլոր հարցերն ու խնդիրները,
որ քննարկում էին այն ժամանակվա միջազգային համագու-
մարները՝ «տիեզերական ժողով»-ները։ Նազովրեցի համեստ
հյուսնի՝ Քրիստոսի ծննդյան և իր համեստագույն մոր ծնող-
դարձության հարցը ալեկոծել էր ամբողջ քաղաքակիրթ կոչ-
ված աշխարհը։ Մարիամից ծնվածը աստվա՞ծ է, թե մարդ.
Քրիստոսի մեջ աստվածային «բնությունն» ու մարդկային

«բնությունը» միախառնված-ձուլվա՞ծ են արդյոք, թե՞ առանձին են. ըստ այսմ էլ նա «միաբնա՞կ» է արդյոք, թե «երկաբնակ»,— այժմ անհավատալի թվացող այս վեճով հազվադեպ ցի համեստ հյուսնի և նրա առավել համեստ ձկնորս աշակերտների հաջորդները համաշխարհային կայսրություն էին ստեղծում իրենց համար։

Սխոլաստիկ մտքերը արյուն ու կյանք են արժենում այն թշվառ սերունդների համար, որոնք ժամանակակիցն են այդ մտքերի տարածման և նրանց շուրջ ծավալված վեճերի։ Հետագա սերունդները ծիծաղելով այդ մտքերի ու վեճերի վրա՝ վայելում են պտուղները միայն։ Կան ժամանակներ, երբ մարդ սպանելուց ավելի հեշտ բան չկա, մանավանդ երբ դրանով զբաղվում են վիթխարի պետություններ։ Մարդկությունը հենց այդպիսի մի ժամանակաշրջան էր ապրում։ Քրիստոսի մեկ կամ երկու «բնության» դատարկազուրկ վեճը խմորվում էր մարդկային հազարավոր կյանքերով և հունցվում էր ծով արյամբ։ Քրիստոսի մեջ մարդկայինի գոյության և չգոյության հարցով վիճարկվում էր բազմաթիվ մանր ու միջակ ժողովուրդների գոյությունն ու չգոյությունը։

Կան պահեր, երբ մի «չէ՞» կամ «այո՞» ասելը հավասարվում է կյանքի կամ մահվան՝ վերանալով նույնիսկ հերոսությունից։ Այն ժամանակվա մեր «այո»-ն կամ «ոչ»-ը բախտորոշ նշանակություն ուներ։ Եվ մեր նախնիք ասեցին՝ «ոչ»։ Եվ այսօր ոչինչ չասող «Քաղկեդոնի ժողով» և «միաբնակ» բառերը դարձան մեր հին պատմության գլխագրերից մեկը...

Համաշխարհային նշանակություն ունեցող այս իրադարձությունը տեղի էր ունենում Մաշտոցի մահից ընդամենը 10—11 տարի անց՝ 451 թվականին։ Ծանո՞թ թվական. մերոնք կենաց ու մահու մարտ էին տալիս Ավարայրում՝ թերևս առ-

տեղյակ, թե ի՜նչ նոր Ավարայր էր պատրաստվում Պոլսո այսօրվա թաղերից մեկում՝ Ֆատը — գյուղում, որ այն ժամանակ կոչվում էր Քաղկեդոն։ Մերոնք չէին մասնակցում քաղկեդոնյան ճակատամարտին, որովհետև ճակատամարտում էին Ավարայրում։ Մերոնք Ավարայրում չհաղթեցին, բայց նաև չպարտվեցին, որ արդեն հաղթանակ էր և մեծ հաղթանակ. Պարսկաստանը ստիպված եղավ Հայաստանից ետ կանչել իր զրադաշտին, և հայը մնաց քրիստոնյա։

Մերոնք չէին կարող խուսափել Քաղկեդոնի ճակատամարտից, որտեղ նույնպես պիտի չհաղթեին, բայց նաև պիտի չպարտվեին, որ արդեն հաղթանակ էր և մեծ հաղթանակ. Հռոմը պիտի ետ տաներ իր ծուռ խաչը, և հայաստանցին պիտի իրեն կոչեր նոյ քրիստոնյա... Այսօր, իհարկե, այս բառակապակցությունը զուտ կրոնական է. այն ժամանակ «հայ քրիստոնյա» կոչվելով՝ մերոնք կարողացան համբերությունի մեջ մասնավորվել, համանմանության մեջ տարբերակվել. այդ համբերությամբ ու համանմանությամբ կանխեցին զրադաշտական (ապա՝ նաև իսլամական) սպառնալիքը, իսկ այդ մասնավորմամբ ու տարբերակմամբ դիմադրեցին հույն-բյուզանդական համահարթիչ վտանգին։

* * *

Մի պահ կարող է թվալ, թե այս ամենը չի առնչվում Մաշտոցին, մանավանդ որ և՛ Ավարայրի ճակատամարտը, և՛ Քաղկեդոնի ժողովը տեղի ունեցան նրա մահից մեկ տասնամյակ հետո։ Բայց ըստ էության Մաշտոցը ոչ միայն առնչվում է Ավարայրին ու Քաղկեդոնին, ոչ միայն մասնակիցն է այդ արյունոտ և անարյուն ճակատամարտերի, այլև փաստական կազմակերպիչն է և՛ մեկի, և՛ մյուսի։

Ավարայրի ճակատամարտը, եթե կուզեք, ըստ էության տեղի ունեցավ ո՛չ թե 451-ին, ո՛չ թե Տղմուտ գետակի ափին, այլ մոտավորապես կես դար առաջ, Գողթան գավառի այն քարանձավներում, որտեղ Մաշտոցը, իր աշակերտի վկայությամբ, «տրտում հոգսերով պաշարված ու թակարդված՝ մտածմունքների ծովն էր ընկած, թե ինչպիսի՞ ելք գտնի» իր «եղբայրների և ազգակիցների համար», երբ նա վերջնականապես վճռել էր «հոգալ համայն (հայոց) աշխարհի ժողովրդի» փրկության գործը։

Չմոռանանք նաև, որ Վարդան Մամիկոնյանը՝ Սահակ Պարթևի թոռը, Մաշտոցի առաջին աշակերտներից մեկն էր, մեկը այն սակավաթիվներից, որոնք առաջինը վարժվեցին Մաշտոցյան տառերի գրությանը և հեղեցին «այբ-բեն-գիմ...»։ Եթե Վարդանը չլիներ սպարապետական տեղը՝ նա, անկասկած, պիտի դառնար մեկը մեր այն դպիր-քերթողներից, որոնք «առաջին թարգմանիչք» են կոչվում, ինչպես որ դարձան նրա անմիջական դասընկերները՝ Հովսեփ Վայոցձորեցին, Ղևոնդ Երեցը, Եզնիկը, Կորյունը և մյուսները։ Մաշտոցի անմիջական աշակերտներից էին նաև Վարդանանցից շատերը։ Ահա թե ինչու Վարդանանց շարժման բուն հեղինակները մաշտոցյանք էին, Մաշտոցի ավագ ու կրտսեր աշակերտները։ Եվ, բացի դրանից, պարսից ռազմիկ փղերն ու Մատյան գնդին հաղթելուց կամ եւ մղելուց առաջ և այդ անելու համար նախ և առաջ հարկավոր էր հաղթել կամ եւ մղել պարսից «քչշ աղանդը»։ Ուստի և նախքան Տղմուտ հասնելը ճակատամարտը պիտի մղվեր «եղծ աղանդոց»-ի մեջ, «եղծ», որի հեղինակը նախ Մաշտոցն է, ապա միայն՝ նրա աշակերտը՝ Եզնիկը...

Այլ խոսքով ասած՝ զրադաշտական նվաճմանը գիմագրե-

լու համար պետք էր գրաքաշտական չլինել։ Իսկ այդպիսի՛ն էր արդյոք հայոց երկիրը Մաշտոցից առաջ...

Արդեն հարյուր տարի էր, ինչ քրիստոնեությունը Հայաստանում համարվում էր պաշտոնական կրոն։ Քանդվել ու ավերվել էին մեհյաններն ու բագինները, որոնց տեղ բարձրացել ու բարձրանում էին եկեղեցիներ՝ հաճախ դեռևս անծեփ ու փայտակաուր։ Բայց այդ եկեղեցիների գմբեթին տնկված խաչը երկնքի մեջ խրվելուց առաջ մխրճվում էր նաև մարդկանց սրտերի մեջ։ Հակառակ հեզության և համբերատարության իր ուսմունքի՝ քրիստոնեությունը տարածվում էր անաքող բռնությամբ. խոսելով կամավորությունից՝ գործում էին հարկադրանքով, կրկնելով «մի՛ սպանիր»՝ հեղում էին արյուն կամ մատնում արտաքսման։

Ժողովուրդը դժվարությամբ էր վարժվում նոր կյանքին։ Դարերով սովոր բազմաստվածության՝ մարդիկ այժմ պարտավոր էին բոլորը պաշտել միայն մեկ աստծու։ Անահիտների, Աստղիկների ու Նանեների երեկվա տեղում Արամազդների, Մհերների, Վահագնների ու Տիրների փոխարինած երրայեցին հաստատել էր իր մորը միայն։ Ատրուշանների հավերժական բոցերի տեղ պլպլում էին աղոտ մոմերը։ Իրենց երեկվա շոշափելի ու տեսանելի աստվածների՝ ոսկեձույլ կամ քարաքանդակ դիցերի փոխարեն մարդիկ պարտավոր էին պաշտել այն Միակին, որին հնարավոր չէր ոչ միայն տեսնել, այլև... հասկանալ։

Եվ իսկապես էլ. օտար կրոնը հետը բերել էր նաև օտար լեզու. ժամասացությունն ու եկեղեցական արարողությունները կատարվում էին հունարեն կամ ասորերեն։ Անգրագիտության մեջ խարխափող երեկվա հեթանոս ժողովրդից խլելով նրան հասկանալի բառն ու բանը, երգն ու աղոթքը, ասքն ու առաս-

պելը՝ տեղը դրել էին մի վերացական անըմբռնելի գաղափար, այն էլ՝ օտար ու անհասկանալի լեզվով։

Ստացվել էր մի անտանելի վիճակ. մարդուց խլել էին իր երեկվա (և դարավոր) հավատը, իսկ տեղը ոչինչ չէին դրել կամ դրել էին միայն ու միայն խոսքով, որ նաև անհասկանալի էր։ Քանդել էին հինն ու դարավորը, իսկ նորը չէին շինել կամ շինել էին միայն ու միայն խոսքով, որ նաև անհասկանալի է։ Հնից օգտվել չէր կարելի, իսկ նորից օգտվելն անկարելի էր, որովհետև նորը փաստորեն չկար, իսկ եղածն էլ՝ անհասկանալի։ Արգելված էին հին երգն ու նվագը, հին խաղերն ու զվարճալիքները։ Եվ այսքանից հետո մինչև իսկ... լալ չէր կարելի. արգելված էին նաև «լալեցց երգ»-երը, ողբ ու կոծը արժանանում էր խստագույն պատժի...

Բայց այսքանով չի լրանում ժամանակաշրջանի ոչ միայն պատկերը, այլև ուրվանկարը։

Քրիստոնեությունը, որ տարածվում էր իբրև մի համամարդկային-ազազգային ուսմունք, առաջին իսկ հաջողություններից հետո անմիջապես ցույց տվեց ինչպես իր դասակարգային, այնպես էլ ազգային էությունը։ Տարածվելով ամենից առաջ հռոմեական կայսրության մեջ և այդ կայսրությունից՝ նա դարձավ մի նոր և զորավոր գործիք բյուզանդական ազդեցության ծավալման ու խորացման։

Հավասարություն ու եղբայրություն էր քարոզում նոր կրոնը, մինչդեռ այդ քարոզի տակ ուրիշներին էր փաթաթում իր վարք ու բարքը, իր կարգն ու կանոնը, իր երգն ու լեզուն։ Մի ասված էր ընդունում նոր կրոնը և գրանով կապամկաշկանդում մարդուն, որ ի քնե հակված է բազմազանության, ինչպես է ինքը բնությունը և այդ բնությունն արտացոլող մարդկային միտքը։ Բայց սա գեռ բավական չէր։ Իրա-

կանում այդ մի և միակ աստվածն էլ իրեն պահում էր իբրև... զտարյուն բյուզանդացի։

Մի համընդհանուր-աստվածային օրենք էր թելադրում նոր կրոնը։ Բայց փաստորեն այդ օրենքը դառնում էր բյուզանդական օրենքի պարտադիր թելադրանք։

Նոր լույս ու հույս տարածող հավատը իրականում հասել էր խոսքի և գործի հակասության մի այնպիսի սրության, որը չէր կարող չկտրատել իր սեփական կարերը։

Եվ այդ կարերն իսկապես որ կտրատվում էին ու պիտի կտրատվեին դեռ։

«Տիեզերական ժողով»-ները, որ գումարվում էին մեղմելու այդ հակասությունները և բթացնելու այդ սրությունը, իրականում դառնում էին փլուզումների վկայություններ ու հաստատումներ։ Այսպես Հռոմից պոկվում էր Կ. Պոլիսը, Կ. Պոլսից՝ Ալեքսանդրիան, Ալեքսանդրիայից՝ Անտիոքը, Անտիոքից՝ Կեսարիան, Կեսարիայից՝ Հայաստանը, Հայաստանից՝ Վրաստանը։ Հռոմը քրիստոնեություն ընդունեց՝ ամենից առաջ իր կայսերական ծիրանու պատռվածքները կարկատելու կամ այդ ծիրանին պապական պարեզոտով ծածկելու համար։ Այդ պարեզոտն ինքն էր հիմա կարաքանդվում, և ծիրանակիրները չէին կարող չշտապել պարեզոտի ճեղքվածքները կարկատելու։

Եվ շտապեցին։

Արևմտյան Հայաստանը վերջնականապես միացվեց Բյուզանդիային, Հայաստանի միջնահատումը դարձավ անջնջելի փաստ, որ պիտի հարատևեր։ Հայկական պետականությունը ստացավ ոչ թե հերթական վնասվածք, այլ ողնաշարի անբուժելի շարդվածք, որ շուտով պիտի հացներ մահվան։

***

Փոքրիշատե խորամիտ քաղաքագետը չէր կարող չհասկանալ, որ Արևելյան Հայաստանին էլ սպառնում է Արևմտյանի վտանգը՝ կատարյալ գաղութացումը։ Արևելյան Հայաստանը փաստորեն արդեն անկախ թագավորություն չէր, այլ պարսկական մի կիսագաղութ։ Հայաստանի մարմնավոր տերերը իրականում շարժուն խաղալիքներ էին բարձր իշխանության ձեռքին։ Իրական վիճակն այնպիսին էր, որ բնիկ իշխանությունների մեծագույն մտահոգությունը իրենց գահույքն էր, բարձը, աթոռը։ Միայն թե չզրկվել իրենց վերադաս տիրոջ շնորհից ու բարյացակամությունից։ Միայն թե պահել իրենց գահույք—բարձ—աթոռը, իսկ եթե հնարավոր է՝ հասնել ավելի բարձր գահույք—բարձ—աթոռի։ Եվ անարգար կլինի ասել, թե նրանք բոլորովին չէին զգում, որ իրենց այդ աթոռների տակ «անտակ անդունդն էր բացվում»։ Եվ արդարացի չի լինի մեղադրել, թե ինչու էին իրենց մտահոգությունները այդքան նեղացրել՝ հասցնելով գահույք—աթոռին միայն։ Վերջին հաշվով՝ նրանք մեղավոր չէին, որովհետև իրերի անողոք տրամաբանությունը՝ ոչ միայն անկախ նրանց կամքից, այլ շատ դեպքերում նաև հակառակ նրանց կամքի՝ հասցրել էր այդ վակուուն։

Նրկիրը մի առանձին փրկություն չէր կարող սպասել նաև հոգևոր տերերից։ Չմոռանանք, որ երկրի քանդման ու ավերման գործին առաջին հերթին մեղսակից էին այդ հոգևոր տերերը։ Նրանք էին փլուզել հին դավանանքն ու մշակույթը, կյանքի երեկվա կարգ ու սարքը։ Շուտ էր տրվել ամեն ինչ, տակն ի վեր էր արվել, որպեսզի նոր ձևով տեղադրվի ու նոր կերպով սարքվի։ Բայց դեռ մնում էր շուտ տրված, տակն ի վեր։ Պետք էր մի բան անել։ Բայց ի՞նչ։ Եվ ինչպե՞ս։

Հարցնում էին բոլորը, իսկ պատասխանող չկար։

Եվ այդ բախտորոշիչ պահին էր, երբ ծնվեց մեկը, ում մասին մեր պատմիչները իրենց խոսքն սկսում են զարմանալի մի պարզությամբ. «Եւ այր մի՝ Մաշտոց անուն...»։

* * *

Տարոնի Հացեկում ծնված այս մարդը չեկավ մեկով էլ ավելացնելու հարցնողների անպակաս քանակը։ Նա եկավ, որ պատասխան գտնի։

Որտեղի՞ց եկավ, ինչպե՞ս, ի՞նչ հրաշքով ծնվեց,— ահավասիկ ևս մի հարց, որ այն ժամանակ չէր տրվում, բայց կրկնվեց ու կրկնվում է արդեն 1600 տարի։ Ինչպե՞ս, ի՞նչ հրաշքով ծնվեց։

Նրանց ծնունդը միշտ էլ թվում է անսպասելի
Եվ հետո մարդկանց զարթի շարունակ զարմանք պատճառում,
Բայց նրանք կյանքում միշտ էլ ծնվում են լոկ այն պատճառով,
Որ անչա՜փ շատ են սպասել նրանց։
Նրանք ծնվում են իրենց ծնողի անօգնությունից,
Որպեսզի դառնան նոր զորեղություն։
Նրանք ծնվում են ինչ-որ հանճարեղ մի հոգնությունից,
Որպեսզի դառնան հանճարեղություն։

Նրանք ծնվում են, որ ապացուցեն,
Թե վերջը մի ուղղ դառնում է սկիզբ։
Նրանք ծնվում են, որ ապացուցեն,
Թե հրաշք չկա,
Այլ կա լոկ նարիք։
Նրանք ծնվում են, որ ապացուցեն,
Թե աչքանոց է լոկ սխրանքն սկսվում,
Որ վերջանում է ամե՛ն մի հեռ ..

Այսպես էլ ծնվեց «այր մի՝ Մաշտոց անուն» .

Հեթանոսական խավարում, ազգային անկախության վերջնական կորստի մթության մեջ, վաղվա և ապագայի անորոշության ու անհայտության մռայլ կես գիշերին նա մրմնջաց «Եղիցի լոյս»։

«Եւ եղև լոյս»։

Գտնվել էր տանջալից հարցի պատասխանը, որը շատ պարզ էր, որովհետև միակն էր։

Զորությամբ ու բազկով Հայաստանը չէր կարող վերականգնել իր միասնությունը, ինչպես նաև պետական անկախությունը։ Ավելին. Մաշտոցն իր կյանքի վերջին տասնամյակը պիտի ապրեր հայկական պետականության իսպառ բացակայության պայմաններում։ Ճիգով ու ջանքով անկարելի է մաքառել օտար լեզուների դեմ, եթե դրանք կրում են պաշտոնական քնույթ։ Իսկ ժողովուրդները գոյատևում են ոչ միայն իրենց հողով, այլև իրենց լեզվով. երբեմն՝ ավելի իրենց լեզվով, քան նույնիսկ հողով։

Անհամեմատ ուժեղ ու գիշատիչ թշնամիներին կեր չդառնալու, նրանց գիմադրելու մի զենք էր մնում. «ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»,— մարմնական ուժի դեմ դնել հոգեկան զորությունը, ահռելի բազուկի դեմ՝ հուժկու միտքը. համընդհանրության դեմ՝ ինքնությունը. «բաժանեա՛ զի տիրեսցես»-ի դեմ՝ «ծանի՛ր զքեզ»-ը...

Եվ միայն այստեղ է հնարավոր դառնում պատասխանելու «ո՞վ էր Մաշտոցը» հարցին։

Մաշտոցն էր այն մարդը, որ եկավ պատասխանելու մեր ժողովրդի առաջ ծառացած հարցին. «Լինե՞լ, թե չլինել»։ Եվ նա ասաց. «Լինե՛լ»։

Կախված էր արդեն մեր հայրենիքը, ճեղքված էր մեր դարավոր քնիկ հողը։ Այդ ճեղքը հետզհետե պիտի խորանալով

ու լայնանալով անդնդանար—վիհանար՝ մեր ժողովրդին դնելով ծանր և ապարդյուն կացության մեջ այն մարդու, որ միաժամանակ պիտի նայի երկու աչքի մեջ։ Եվ Մաշտոցն էր այն մարդը, որը

Զծնվեց ինչ-որ մի մորից.
Նա հենց այդ ճեղքից ծառացավ հանկարծ,
Որ ճեղքը լցնի գեթ ինքն իրենով։
Եվ խոկալիս էլ լցրեց այդ ճեղքը.
Մեր բաժան-բաժան հողերը նորից
Այդ նա էր միայն, որ իրար բերեց
Ու միավորեց... արդեն մեր մտքում։
Եվ այդ օրից ի վեր
Ու մինչև այսօր
Այդ միացումը մնում է անխախտ...

Մենքից արդեն խլել էին մեր պետականությունը, որի վերականգնումը անհնարին էր և անկարելի պիտի մնար դեռ երկար դարեր։ Հայրենի գահը տվել էր մի փլվածք, որի վերանորոգումն անկարելի էր և անհնարին պիտի դառնար դեռ երկար դարեր։ Եվ Մաշտոցն էր այն մարդը, որը

Զծնվեց ինչ-որ մի մորից.
Նա այդ փլվածքից բուսնեց սխրանքով,
Որ այդ փլվածքը ողջանա նորից։

Եվ այդ փլվածքը իրոք ողջացավ. մեր փլուզված պետականության տեղ նա ստեղծեց մի նոր պետություն՝ մի հոգեկան պետություն. մեր թագավորության ապառված տների տեղ նա իրենով սկսեց թագավորական մի նոր հարստություն—դինաստիա՝

Ոչ թե մեզանից խլված հողերի,
Մեր բաժան-բաժան հայրենու վրա,

Այլ մեր անբաժն՝,
Մեր անկիսելի՛,
Երբե՞ք չխլվող հոգիների մեջ։

Եվ թագավորական այդ նոր տունը անվախճան եղավ։ Մեր հետագա բոլոր մաքի արքաները՝ Խորենացուց մինչև Նարեկացի, Նարեկացուց մինչև Աբովյան ու Րաֆֆի, սրանցից մինչև Վարուժան ու Չարենց՝ բոլորն անխտիր և յուրաքանչյուրն

Անպայման պիտի
Մեկեր նույն տեղից,
Նույն ցեղից սերեր
Եվ պատվով-փառքով-վեհությամբ կրեր
Նույն տոհմանունը՝
Մեծրոպ Մաշտոցյանը...

Ըստ մեր դեղեցիկ առասպելի՝ իր Արտաշես հոր մահից հետո Արտավազդը բացականչեց. «Աստվածս ո՞ւմ թագուորեմ։ Արտավազդի ժամանակ Հայաստանն ավերակվա՞ծ էր, թե ոչ՝ հավատի չէ։ Բայց վավերական է, որ Մաշտոցի օրոք Հայաստանն իսկապես որ ավերակված էր Սարմենոմին և հոգեպես։ Եվ Մաշտոցին ավելի էր վայելում Արտավազդի նշանավոր խոսքը։

Հայտնի է, որ առասպելական Արտավազդը իր հայրենի ավերակները վերաշինելուն նախընտրեց անմահությունը՝ Մասյաց վիհի մեջ, փայփայելով աշխարհը կործանելու այն չարությունը, որ կաշկանդվում էր դարբինների կոանների զարկերով։ Առավել հայտնի է սակայն, որ Մաշտոցը, տե՛ղ Մաշտոցը դարձավ մեր ցարդուփշուր ինքնության առաջին և ամենահմուտ դարբինը։ Նա առաջինը վերաշինեց մեր ավերակները, վերականգնեց կործանվածը, նորոգեց քանդվածը

և դրանով իսկ անմահացավ իսկապես և ոչ թե առասպելի մեջ...

Եվ Մաշտոցն էր, որ փլատակված մեր հավատի տեղ հաստատեց նոր հավատ, հավատ, որ մեզ համար հաղուստ չդարձավ, այլ մեջքապնդող զոտի։ Հոմմացրիվ արված մեր հին մշակույթի տեղ նա սկզբնավորեց մի նոր մշակույթ, որ պիտի գլուխգործոցներ տար համաշխարհային քաղաքակրթությանը՝ Զվարթնոցի տեսքով ու Նարեկացու հոգով. Շիրակացու անգեն և Համբարձումյանի զինավառ աչքերով. Կոմիտասի ականջով, որ պիտի փոխանցվեր Խաչատրյանին. Թորոս Թոսլինի մատներով, որ պիտի ժառանգեր Մարտիրոս Սարյանը. Սայաթ-Նովայի բարբառով, որ պիտի լեզու դառնար Չարենցի բերանում. Անիով, որ պիտի վերածվեր Երևանի...

Այդ նա էր, որ մեր անգիր բանաստեղծի փլատակների վրա հիմնադրեց մեր դպրությունն ու քերթությունը. զողված լռեցված երգիչների տեղ հնչեցրեց մեր հոգևոր մեղեդին. հեթանոսական անգիտության տեղ փռեց գիտության հերիաթական սփռոցը, որի վրա մեզ պիտի կերակուր տային մեր հոգևոր մատակարարները՝ Խորենացուց ու Դավիթ Անհաղթից մինչև Տաթևացի ու Գոշ, մինչև Ալիշան ու Նալբանդյան, մինչև Աբեղյան ու Աճառյան, Օրբելիներ ու Ալիխանյաններ...

Այդ նա էր, նորի՞ց և դարձյա՛լ նա, որ մեր լեզուն հանեց այն անհախանձելի վիճակից, ինչ ունենում է աղքատ աղգականը իր մեծատուն բարեկամների տանը։ Արդեն միայն Աստվածաշնչի թարգմանությամբ հայոց լեզուն կատարեց իր գառատոնը՝ ապացուցելով, որ ի զորու է լինալես արտահայտելու ինչպես պատմություն, այնպես էլ օրենսդրություն, ինչպես հրապարակախոսություն, այնպես էլ բանաստեղծու-

թյուն, ինչպես բուսական ու կենդանական աշխարհ, այնպես էլ երևակայություն-տեսիլք և կանխատեսություն-մարգարեություն, որովհետև հին երբայեցոց «Մուրբ գիրքը» իսկապես մի Ամենամատյան էր գիտության և արվեստի բազում բնագավառների։

Միայն Աստվածաշնչի թարգմանությամբ, որ հետո օտարներից պիտի կոչվի «մայր թարգմանություններից» կամ «թագուհի թարգմանություններից», հայոց լեզուն՝ հնդեվրոպական ընտանիքի այդ զավակը, ազգատ ազգականի իր անմխիթար վիճակից պիտի միանգամայն հասներ գահերեցության իր այն օրինական բարձին, որն այլևս չպիտի կարողանային խլել նրա արիական զոռոզ ազգակիցները, և բազմած իր այդ օրինական բարձին՝ աշխարհի բազմաթիվ ակադեմիաներից ու ճեմարաններից պիտի ընդուներ «հրեշտակ-դեսպան»-ներ, որոնք նրա «Տպավորությունների գրքի» մեջ պիտի թողնեին իրենց մեծ անունները՝ Սկրոդեր և Հյուսիշման, Կոնիբեր և Մեյն, Մարկվարտ և Մառ...

Այդ նա էր, դարձյալ ու վերստին նա՛, որ այս ամենով մեզ ծանոթացրեց մեզ, տվեց ինքնաճանաչում, անվստահության տեղ դնելով ինքնավստահություն, բայց ոչ անձնասպանություն. հուսահատության տեղ՝ հուսալիություն, բայց ոչ կարճատեսություն. հավատաբեկության տեղ՝ հավատ, բայց ոչ ինքնակուրություն, ինչպես նաև

Քանակի դեմ՝ թե,
Թվի դեմ՝ թռիչք,
Արյան դեմ՝ քանաք,
Թրի դեմ՝ գրիչ
Եվ դարանի դեմ՝ Մատենադարան...

Առանց այդ ինքնաճանաչման և ինքնավստահության, առանց այդ հույսի և հավատի, առանց այն նոր զենքի, որ

կոչվում էր գրիչ, չէր կարող լինել ո՞չ Ավարայրը, ո՞չ և Քաղ-կեդոնը, ինչպես որ անհնարին է կռվել՝ դեռ չարիքայան, և պատասխան տալ՝ չմտածած։

Ահա թե ինչու Մաշտոցն է իսկական հեղինակն ու կազ-մակերպիչը մեր քաղաքական պայքարի երկու բախտորոշ հաղթանակների՝ ո՞չ միայն զրերի գյուտի, որի շարունակու-թյունն էր Ավարայրը, այլ նաև Դվինի ժողովի, որ պիտի Քաղկեդոնին ասեր «ոչ»։ Ահա թե ինչու Մեսրոպն է մեր մե-ծագույն և անբաղդատելի քաղաքագետը...

***

Միայն այսպիսի բարձունքից նայելով և այս բարձունքից նայելիս է երևում իսկական հասակն այն վիթխարի անձնա-վորության, որին սովորաբար կոչում ենք մեր գրերի գյու-տարար։

Մաշտոցը, անտարակույս, հանճարեղ լեզվաբան էր, ան-մրցակից հետախույզ հնչյունական այն բարդ համակարգի, որ ուներ և ունեցել է մեր լեզուն։

Մաշտոցը նաև մեծ երաժիշտ էր։ Եվ այս ասվում է ոչ լոկ այն իրավունքով, որ մեզ տալիս է պատմագրությունը՝ վկա-յելով, թե «նախ սուրբն Իսահակ (Սահակ Պարթև) և սուրբն Մեսրովպ ասացին զութն եղանակաւոր ձայնսն և զերկու ձայն ստեղիս... և սուրբն Մեսրովպ՝ զկարգն Ապաշխարության»։

Առանց այս պատմական փաստի էլ Մաշտոցի երաժիշտ լինելը վեր է ամեն մի տարակուսանքից։ Առանց երաժշտա-կան շատ սուր ականջի, առանց երբին լսողության անկարելի էր (և այն էլ առաջին անգամ) տարբերել ու տարբերակել մեր լեզվի թեկուզ և բաղձայնական եռաշարքը (ծ-ց-ձ,

ճ-շ-ջ և այլն), ինչպես որ այսօր էլ այդ հնչյունների տարբեր-
ությունը որսալ կարող է այն օտարազգին միայն, ով երա-
ժշտական սուր լսողությամբ է օժտված։

Այո՛, Մաշտոցը մեծ լեզվաբան էր և երաժիշտ։ Առանց
այդ ունակությունների նա չէր կարող ստեղծել մեր Այբու-
բենն այնպես, որ աշխարհի խոշորագույն լեզվաբաններից
մեկը՝ ֆրանսիացի Մեյեն, ավելի քան 1500 տարի հետո գրեր.
«Հայկական Այբուբենի համակարգը գլուխգործոց է։ Հայ-
կական հնչումը ձայնագրվել է մի յուրահատուկ նշանով, և
այդ համակարգը այնքան լավ է հիմնվել, որ հայոց ազգին
հայթայթեց հնչումի վերջնական մի արտահայտություն, որը
մինչև հիմա իրեն պահեց առանց որևէ փոփոխություն կրելու,
առանց բարեփոխության կարիք զգալու, որովհետև հենց
սկզբից կատարյալ էր»։

Եվ, արդարև. միայն հանճարեղ լեզվաբանը կարող էր
4-րդ դարի վերջերին հասնել այսպիսի արդյունքի։ Բայց լեզ-
վաբանը չէր, որ Մաշտոցի մեջ որոնեց քաղաքագետին։
Ճիշտ հակառակն է, մեծ քաղաքագետն էր, որ իր քաղաքա-
գիտական մտքին տվեց լեզվաբանական կերպանվություն,
որովհետև դա էր միակ ելքը, այն ելքը, որը գտնելու համար
հարկավոր էր լինել Վիթխարի քաղաքագետ։ Եվ սա ենթա-
դրություն չէ. սրա ապացույցն է այն սկզբունքը, որով Մաշ-
տոցը հնարել է մեր Այբուբենը։

Եթե Մաշտոցը գործին նայեր իբրև սոսկ տառաստեղծ,
ինչպես որ վարվել են այլ այբուբենների բազմաթիվ հնա-
րողները, ապա նա կատարելով ամենահիմնականն ու ամե-
նադժվարինը՝ տարբերակելով և որոշելով մեր լեզվի հնչյու-
նական համակարգը, պիտի որ եղած այս կամ այն այբու-
բենի տառերով նշանագրեր այդ հնչյունները՝ պակասի հա-

մար դիմելով մեկ այլ այբուբենի օգնությանն։ Նոր այբուբեն կազմելիս այսպես են վարվել բոլորը, այդ թվում նաև սլավոնական այբուբենի հեղինակները, որոնք սլավոնական հնչյունական համակարգի համար վերցրեցին հունական գրերը, իսկ հունարենում չեղած գրերը լրացրեցին ուրիշ այբուբեններից՝ առնելով, օրինակ, ш-ն՝ եբրայականից, ч-ն ու ц-ն՝ հայկականից, իսկ щ-ն կազմելով ч-ի և ц-ի միացումից։

Այսպես վարվելու համար Մաշտոցն ուներ բոլոր հնարավորությունները. նա քաջահմուտ էր ժամանակի գլխավոր լեզուներին ու նրանց այբուբեններին՝ հունականին, ասորականին և պարսկականին։ Նա կարող էր նախընտրել այդ այբուբեններից որևէ մեկը, վերցնել դրա համապատասխան տառերը, իսկ պակասը լրացնել մեկ այլ այբուբենով։ Եթե նա այբուբենի սովորական ստեղծող լիներ՝ այդպես էլ կաներ, բայց նա ընտրեց բոլորովին այլ ճանապարհ։ Քաղաքագետ Մաշտոցը վերջնականապես համոզվել էր, որ վիթխարի և գիշատիչ աշխարհակալության կողքին, առավել ևս երկու աշխարհակալությունների միջև ապրող փոքրաքանակ ազգությունը կարող է գոյատևել՝ շեշտելով իր տարբերությունը և ոչ թե գլխագրելով նմանությունները։

Վիճելով զարմանալի խորաթափանց գիտնական՝ նա ասորա-պարսկական աջից-ձախ գրությանը գերադասեց հունական ձախից-աջ գրությունը, որը գրության ավելի բարձր վիճակ էր ներկայացնում և դարեր հետո պիտի աջից ձախ գրողներին իսկ ստիպեր վերաշրջելու իրենց գրության եղանակը։ Ճիշտ այդպես էլ նա, հունարենի օրինակով, նշանագրեր ստեղծեց նաև ձայնավորների համար, ինչը բացակայում էր պարսկական և սեմական այբուբեններից և մի այնպիսի թերություն էր, որ դարեր հետո պիտի ստիպեր լրաց-

նելու այդ թերությունը։ Նույն ձևով նա կցողական գրությունից նախընտրեց անշատականը, մի խոսքով՝ այն ժամանակվա բոլոր այբուբեններից առավ նրանց լավագույնը, բայց խուսափեց այն թերություններից, որոնք այդ այբուբենների մեջ հարատևեցին, ինչպես, օրինակ՝ հնչյունագրական այն թերությունից, երբ միևնույն տառը տարբեր պայմաններով տարբեր հնչյուն է նշանակում և ընդհակառակը՝ միևնույն հնչյունը տարբեր տեղերում նշանագրվում է այլ տառերով։ Այս ամենով Մաշտոցն իր այբուբենը հասցրեց մի այնպիսի վիճակի, որը վաղուց արդեն գիտության կողմից համարվում է իր ժամանակի ամենակատարյալը և անթերին։

Բայց այս չէ գլխավորը։ Մաշտոցի քուն նպատակը ոչ թե հերթական մի այբուբենի ստեղծումն էր իր ժողովրդի համար, այլ մի բոլորովին ուրույն, բոլորովին նոր, զուտ հայկական Այբուբենի ստեղծումը։ Նույնիսկ այն դեպքերում, երբ նա վերցրել է որևէ գիր, ապա դա վերափոխել է այնպես, իր նախատիպից հեռացել այնքան, որ մինչև հիմա էլ այդ նախատիպը որոշելիս գիտությունը չի կարողանում խուսափել վեճից։ Հունարենի հնչյունական համակարգում չեղած հնչյունների համար Մաշտոցը չի վերցրել ուրիշ այբուբենների համապատասխան գիրը, այլ ինքն է հորինել և այն էլ՝ իր իսկ հնարած տառերից։

Հեռանալ նմանություններից, ընդգծել տարբերությունները՝ սրանք հասցնելով մի բոլորովին նոր որակի,— ահա այն սկզբունքը, որով առաջնորդվել է Մաշտոցը և հասել այդ սկզբունքի կատարյալ իրագործման։ Ա՛յս կերպ նա ստեղծեց մի Այբուբեն, մի զուտ հայկական Այբուբեն, որ տարբեր է թե՛ իր ժամանակի, թե՛ հետագայի բոլոր մյուս այբուբեններից։

Ավելին. հավատարիմ իր այս սկզբունքին, Մաշտոցի միտքը մտել է այնպիսի մի ոլորտ, որ դժվար է մինչև իսկ երևակայել։ Եվ իսկապես էլ. ո՞վ է այն երկրորդ տառաստեղծը, որ մտադրվել է նույնիսկ կետադրական նշաններով էլ տարբերվել եղած ու լինելիք բոլոր այբուբեններից։ Առայժմ չկա այդ երկրորդը, և Մաշտոցն է առաջինը, որը խիզախեց գլխիվայր շուռ տալու, օրինակ, միջակետի և վերջակետի կետադրական նշանակությունը։ Իր ստեղծած զուտ հայկական բուքը այդպես էլ մնաց անկրկնելի։ Իր ստեղծած բացականչականն ու հարցականը՝ նորից լինելով զուտ հայկական, կրկին մնալով եզակի՝ միաժամանակ ձեռք բերեցին ամենահարմարի իրավացի համարումը։

Այսպես կարող էր գործել ո՛չ սոսկ տառաստեղծը, ո՛չ էլ մեծ լեզվաբանն անգամ. այսպես կարող էր գործել միայն մեծ քաղաքագետը։

***

Եվ գառնալով մեր առաջին ուսուցիչն ու մեր առաջին դպրոցի առաջին տեսուչը՝ նա չմոռացավ դպրոցներ բանալ և ուսուցիչներ պատրաստել նաև վրաց ու աղվանից կողմերում։ Եվ հիմնադրելով մեր դպրությունը՝ օգնեց, որ հիմնադրվի դպրությունը նաև մեր մերձավոր հարևանների, որոնցից վրացականը պիտի պլուսգործոցներ տար։

Անդրկովկասյան այս լուսավորչությամբ Մաշտոցը «բաժանիր, որ տիրես» քաղաքականության մշտահարուցց հարցին տվեց «մերձեցիր, որ չտիրեն» պատասխանը, որի ճրշտությունը հաստատվում է եղբայրակից ժողովուրդների բազմադարյան պատմությամբ...

Եվ ահավասիկ նրան ծնած և նրանով բազմիցս վերածնված ժողովուրդը հանդիսավորությամբ ու երախտագիտությամբ, հպարտությամբ ու պարտավորվածությամբ տոնում է 1600-ամյակը այն մարդու, որը

Ովքե՞ց, որ ծվե՞նը,
Եղա՞վ, որ լինե՞նք,
Եվ անմահացա՞վ,
Որ անմահանա՞նք։

Նրա համար մի առանձին նորություն չէ իր ծնունդը նշված տեսնելը. այսպես թե այնպես նրա ծնունդը նշվել է ամե՛ն տարի։ Բայց նորություն է, և մե՜ծ նորություն, որ այս անգամ նրա փառատոնը կատարվում է ոչ թե եկեղեցական օրացույցով, այլ պետական որոշմամբ. ոչ միայն զանգերի զողանջումով ու երգախառն աղոթքով, այլև գիտական զեկուցումներով և հայրենաշունչ համերգներով. ոչ թե եկեղեցիների բեմերից, այլ հանրային մեծ դահլիճներում։

Այդ փառատոնը կատարում է մի ժողովուրդ, որ սփռված է ամբողջ աշխարհի վրա և, հակառակ այդ ցաքուցրիվությանը, պահում է իր ինքնությունը, ազգային իր կերպարանքը, իր հոգևոր մշակույթն ու դասական լեզուն, և պահում է նաև շնորհիվ այն մեծազույն հայի, որի փառատոնն էլ կատարում է այսօր։

Այդ փառատոնն առավել հանդիսավորությամբ կատարում է մի ժողովուրդ, որ ապրում է իր վաղեմի և նորագ հայրենիքում, Մասիսների հակումի տակ, Սևանի ալիքների լուսափոխությամբ ողողված, իր հնագարյան Մատենադարանի և իր ազգային նոր Ակադեմիայի ասուլիսով խանդավառ...

... Եվ վերարթնացած մեր ժողովուրդը այսօր տոնելով երբևէ ծնած իր զավակներից ամենամեծի հոբելյանը, քաջ գի-

տակցում է, որ դրանով իսկ տոնում է իր իսկ հոբելյանը, փառաբանում ոչ միայն իր դպրության և արվեստների, իր լեզվի և գիտությունների տոնը, այլև տոնն անկախության ու պետականության իր դարավոր երազի, գոյության և հարատևության իր անքակտելի հավատի։

Նա հաստատում է խորապես, որ իր ամենամեծ զավակի ծնունդը՝ դառնալով ինչ-որ նոր Մկիզը, միաժամանակ եղել է և է մի Շարունակություն, որ չի կարող վախճան ունենալ, քանի դեռ մեր մանուկների անարատ բերանից հնչում է մեր ազգային մեծագույն երգը՝ «Այր-բեն-գիմ»-ը։

Այս գիտակցումից է ծնվում և այն հարցը.

Թե պե՞տք է արդյոք, որ նրա անվամբ
Մի համալսարան կամ մի պողոտա՝ կոչվի աշխարհում,
Երբ այդ անունով մի ամբողջ ազգ է կոչում ինքն իրեն,
Ազգ,
Որ ապրելու մտադրությամբ մնալ է հաճախ,
Սակայն մնալու մտադրությամբ
Չի ապրել երբե՛ք՝ թեկուզ և մի օր ..

23, 26 IV. 62
Երևան

---

* Նախկին Լենինի (Ստալինի) պողոտան Երևանում այժմ կոչվում է Մաշտոցի անունով, որը և երազում էր Պ. Սևակը։

ԱԶԳԱՅԻՆ ՍՆԱՊԱՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ

(հատված)*

... Իսկ ո՞վ ասաց, որ հայ երիտասարդ գրողը պիտի սովորի միայն «Հացի խնդրից» ու «Հացավանից», բայց ոչ նաև Գոլսուորսիից ու Հեմինգուէյից, միայն Թումանյանից ու Տերյանից, բայց ոչ նաև Ներուդայից և Լորկայից։ Մենք հարուստ ենք գարավոր ավանդներո՞վ։ Այո՛։ Բայց մի՞թե ավելի ենք հարուստ, քան Սահարան ավազով։ Իսկ գիտե՞ք, որ եգիպտացիք տարեկան մի քանի հազար խորանարդ մետր ավազ են ծախս առնում Անգլիայից, և գիտե՞ք, թե ո՞ւմ համար։ Սահարա՞յի համար... ավա՜ղ՝ Սահարա՛յի համար, որովհետև անապատի ավազը մաքր է և թետոն չի դառնում։

Թետոն ունենալու և մեր ազգային գրական շենքը կառուցելու համար մենք ոչ միայն իրավունք ունենք, այլև պարզապես պարտավոր ենք ավազ ներմուծել՝ որտեղից էլ որ դա լինի։ Եվ այսպե՛ս, ճիշտ այսպե՛ս էլ վարվել են մեր հեռավոր ու մոտավոր բոլոր այն նախնիները, որոնք այսօր մեր սրբություններն են և սրբություն են դարձել հենց նո՛ւյն

---

* *Հայաստանի գրողների 5-րդ համագումարի (1966 թ.) եզրափակից, որը ցավոք ժամանակին տպագրվել է կրճատումներով։*

պատճառով, «ավազ ներմուծելու» շնորհիվ՝ սկսած Մաշտոցից մինչև Տերյան ու Չարենց, մինչև Մեծարենց ու Վարուժան։ Եվ ավելորդ եմ համարում նման մի դահլիճում իմ այս միտքը մանրելու. յուրաքանչյուր ոք պիտի որ իմանա դա։

Բայց ես ինձ թույլ եմ տալիս ասելու, որ ժողովուրդների (մանավանդ փոքր ժողովուրդների) հարատևման երկու եղանակ կա միայն. կա՛մ ընթանալ համամարդկային քաղաքակրթության հետ զուգաքայլ, կա՛մ ապրել նախնական-վաշկատնային կյանքով։ Այս վերջին ճամփան մեր առջև փակ է և փակ է արդեն ավելի քան 1500 տարի։ Ուրեմն, սուրբ Մեսրոպի կամքով թե մեղքով, մեզ մնում է միայն մե՛կ ճանապարհ՝ աշխարհի առաջադեմ երկրներից շատ ետ չմնալու, նրանց հետ համաքայլելու ուղին։ Հակառակ դեպքում մեզ չի փրկելու ո՛չ մի հովանոց կամ անձրևանոց. պիտի այրվենք կամ նեխվենք։

Գուցե տագնա՞պ կա իմ այս խոսքերի մեջ։ Գուցե։ Բայց դա ընդամենը տագնապ է և ոչ թե խուճապ։ Եվ դա այն տագնապն է, որ ունենում է գնացքից կամ օդանավից ուշացողը։

Մենք իրավունք չունենք ուշանալ պատմության գնացքից կամ օդանավից։

Մենք պարտավոր ենք շաճել շախմատային մեր այն խաղը, որ սկսել ենք ոչ թե մենք, այլ Մեսրոպ Մաշտոցը...

Այստեղ է ահա, որ ես պիտի դառնամ ազգային արժանապատվության հարցին և այստեղ է, որ ես բաց ճակատով և լեցուն հպարտությամբ պիտի վկայեմ, որ ես հայ եմ՝ զավակը մի ժողովրդի, որ իրոք շատ բան է տվել աշխարհի քաղաքակրթությանը և տվածի մեջ էլ՝ ինձ համար ամենաթանկն ու ամենագեղեցիկը՝ իր այլասիրական այն ոգին, որ

եվրոպացիք ալտրուիզմ են կոչում, իսկ մեր երկրում գերագասելի է կոչել տիեզերացիոնալիզմ»։

Բայց մենք այսօր կարող ենք հպարտանալ հենց դրանով. ոչ մի ազգ ու ցեղ չի կարող մեզ հանդիմանել որևէ մեկի տունը քանդելու, որևէ մեկի գերեզմանոցը գրոսայգի դարձնելու, որևէ մեկին զավանափոխելու, որևէ մեկին բռնի ձուլելու հանցանքի մեջ։ Հիմա դժվար է հաշվել մեր կորստի և շահածի տարբերությունը։ Շահել ենք բարի անուն, այլասեր կոչվելու հպարտություն, բացճակատ ապրելու եղակի հնարավորություն, բայց կորցրել ենք... Թույլ տվեք չթվարկել, թե ինչե՞ր ենք կորցրել։

Թույլ տվեք* ընդամենը վերահաստատել, որ դարձել ենք շա՛տ-շա՛տ-շա՛տ վիրավոր, վիրավոր հոգով ու հողով։ Եվ եթե Մայակովսկին ասում էր՝ հրդեհվող սրտի վրա կեղեն քնքշանքով և ոչ հրեշային կոպիտ սապոգներով, ապա դա ասված է ամենից առաջ հենց մեր ժողովրդի մասին։ Եվ եթե ամեն մարդ ունի իր արժանապատվությունը, ապա ամեն ազգ ունի երկնակի։ Իսկ վիրավոր ազգը, ինչպիսին մենք ենք՝ քառակի։ Ճատ որում ես կոչ եմ անում ոչ թե հոգեբանական ըմբռնումի, այլ արդարության մի պահանջի, որ պետք է պարտադիր լինի եթե ոչ ամեն մի քաղաքացուն, ապա ամեն մի արվեստագետի համար...

Ամեն ճշմարիտ գրող իր ժողովրդի անձնագիրն է կամ իր ժողովրդի «գատական գործը»։ Ես, որպես հայ ժողովրդի բանաստեղծ, ինձ համար մեծագույն անպատվություն կհամարեմ, եթե իմանամ, որ որևէ հայ պատմաբան պատմություն

---

* Սույն պարբերությունը հրապարակումներից դուրս մնացած հատվածներից մեկն է։

է աղավաղում՝ ի վնաս հարևան ժողովրդի, որևէ հայ ճանապարհաշինարար խիճ է սարքում հարևանի խաչքարերից, որևէ հայ երկրաբան պալեցումներ է կատարում հարևանի հինավուրց եկեղեցու և կամ մեշիդի պատերի տակ, որևէ հայ բանաստեղծ հայհոյական խոսք է ասում հարևանի հերոսի հասցեին։

Բայց ես գիտակցում եմ նաև, խորապես եմ գիտակցում, որ ուրիշներից արժանապատվություն, հարգանք կարող է պահանջել լոկ նա, ով արժանապատվության զգացում ունի ինքը...

17—18 XI 66
Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կազմողի կողմից 5
Խոսք Հավատքի 7
Մայրենի լեզու 14
Հայոց լեզու 17
Եվ Այր մի՝ Մաշտոց անուն... (պոեմ) 22
Թրի դեմ՝ Գրիչ (հոդված) 30
Ազգային անպարծություն և ազգային արժանապատվություն (հատված) 36

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Եվ Այր մի՝ Մաշտոց անուն

Կազմող՝ Հավլետ Կարեհիկյան

Խմբագիր՝ Ս Ս Հակոբյան
Նկարիչ՝ Հ Ա Մաժյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Ն Գրիգորիչյան
Տեխն. խմբագիր՝ Ա. Գ. Խաչատրյան
Վերատեսող սրբագրիչ՝ Լ. Ա. Կարապետյան

ИБ—№ 3276

Հանձնված է շարվածքի 13 05 1991 թ.։ Ստորագրված է տպագրության՝ 30 05 1991 թ.։ Չափսը՝ 70×108 1/32։ Թուղթ՝ տպ. № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրությունը՝ բարձր։ Պայմ. 3,5 մամ., տպ. 3,8 գուն. թ. օտ., հրատ. 2,8 մամ։ Տպաքանակ՝ 25000։ Պատվեր՝ 590։ Գինը՝ 1 ռուբ. 90 կոպ։

«Լույս» հրատարակչություն, Երևան—9, Կորյունի 19 աս։

Издательство «Луйс», Ереван-9, ул Корюна 19а

ՀՀ նախարարների խորհրդին առընթեր մամուլի կոմիտեի Հակոբ Մեգապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им Акопа Мегапарта Комитета по печати при Совете Министров Республики Армения Ереван-9, ул Теряна, 91.

In 904.